



## ԿՐՕՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

Ի ԴԵԿՏԵՄԲԵՐ 1909

ԹԻԻ 2

ԽՄՐԱԳՐԱՊԵՏ

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Վ. Ա. ՐԻԶ

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՀԱՒԱՏՔ ԵՒ ԳՈՐԾՔ

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ

ԱՂՈԹՔԸ

Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԼԵՋՈՒՆ (ՈՏԱՆԱՆՈՐ)

ՆԱՐԵԿԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԿԱՄ ԱՐԵԱԿՈՒՆԵԱՅ ԹԱ-  
ԴԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ

ԲԱՐՈՋԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ

Հ. ԳԵԼՑԵՐ

ՏԻՐԱՅԻ ՎԱՐԳԱՊԵՏ

ՊԱՐԳԵՒ ՎԱՐԳԱՊԵՏ

ՄԵԿԵՆԻԶ

Գ. ՕՏԵԱՆ

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ

Յ. ՄՐԱԸՐԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ

ԹԱՐԳ. ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

Գին 50 փարսյ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐԱՌԹԵԱՆ

Պապը Ալի հասկեսի Սեփեթհիլե փողոց Թիլ 27



Գուռառներէ ինքնաբերաբար դիմումներ կը հասնին Վարչաւթեանս՝ կրօնաթերթիս բաժանորդագրուելու խնդրանօք :

Ի պատասխան այս խնդրանքներու կը յայտարարենք թէ՛ այսպիսիներու և թէ՛ ուրիշ բաժանորդ ըլլալ փափաքողներու թէ՛ կրնան դիմել իրենց պատկանած Առաջնորդարաններու կամ Թաղ . Խորհուրդներու և կամ յատկապէս նշանակուած գործակալներու և անոնց միջոցաւ իրենց դիմումը ներկայացնել և ստանալ թերթերը :

Ի դիւրութիւն կը ծանուցանենք ի ստորեւ անունները այն առաջնորդներուն և գործակալներուն , որոնց գործակցութիւնը խնդրած ենք թերթիս ի նպաստ :


### ՅՈՒՑԱԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ

#### ”ՏԱՃԱՐ” ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

|                   |                                                 |
|-------------------|-------------------------------------------------|
| Ադրիանուպոլիս     | Առաջն . Տեղապահ Տ . Մատթէոս Վրդպ . Լինճէեան     |
| Ադեմաանդրիս       | Միհրան էֆ . Թէլեան                              |
| Ամերիկա           | Առաջ . Փոխանորդ Տ . Պօղոս Վրդպ . Գաֆթանեան      |
| Այնքապ            | Տ . Գարեգին Քհնյ . Պօղարեան                     |
| Ասաբազար          | Գրիգոր էֆ . Ակօնայեան                           |
| Արմաւ             | Փոխ-Վանահայր Տ . Մեսրոպ Ծ . Վրդպ . Նարոյեան     |
| Աֆիօն-Գարահիսար   | Տ . Համազասպ Քհնյ . Բազրատունի                  |
| Գաղասիա           | Առաջնորդ Տ . Բարսէյ Ծ . Վրդպ . Կիւլէսէրեան      |
| Գօնիս             | Տ . Յովհաննէս Քհնյ . Գուլումճեան                |
| Եգիպտոս           | Առաջնորդ Տ . Մկրտիչ Ծ . Վրդպ . Աղաւնունի        |
| Եդեսիա            | Ք . Թիւրաքեան էֆ .                              |
| Եօզլաս            | Առաջնորդ Տ . Խորէն Ծ . Վրդպ . Դիմաքսեան         |
| Երզնկա            | « Տ . Երուանդ Վրդպ . Փէրտանճեան                 |
| Եւդոկիա           | Առաջն . Տեղապահ Տ . Արտաւազդ Վրդպ . Գալէնտէրեան |
| Զմիւռնիա          | « Փոխանորդ Տ . Յովհաննէս Ա . Քհնյ . Մինասեան    |
| Էսկիեքհիւր        | « « Տ . Համազասպ Քհնյ .                         |
| Խարբերդ           | « Տեղապահ Տ . Գէորգ Ծ . Վրդպ . Ասլանեան         |
| Կարին             | Առաջնորդ Տ . Սմբատ Ծ . Վրդպ . Սաատէթեան         |
| Կեսարիա           | « Տ . Տրդատ Ս . Եպիսկ . Պալեան                  |
| Կիւսսոն           | Մաթոս էֆ . Թոքատլեան                            |
| Հալեպ             | Առաջն . Տեղապահ Տ . Շահէ Վրդպ . Գասպարեան       |
| Մանչէսթըր         | Առաջնորդ Տ . Գէորգ Ս . Եպիսկ . Իւթիւճեան        |
| Մարաւ             | Տ . Հմայեակ Քհնյ . Վարժապետեան                  |
| Մարզուան          | Յակոբ էֆ . Սրապեան                              |
| Մարսիլիա          | Հոդեւոր Տեսուչ Տ . Եղիշէ Քհնյ . Գալչինեան       |
| Նիկովիդիա         | Առաջնորդ Տ . Ստեփաննոս Ս . Եպիսկ . Յովակիմեան   |
| Նիւ-Եօք           | Տօքթ . Թիւրաքեան Խան                            |
| Պանսրմա-Պալլեքսեր | Առաջնորդ Տ . Կարապետ Ծ . Վրդպ . Մաղլումեան      |
| Պաղատս            | « Տ . Մովսէս Ս . Եպիսկ . Կէօմրիւքճեան           |



Հայոց Եկեղեցական



# ԿՐԹՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1909

ԹԻԻ 2

## ԵԿԵՂԵՑԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՅՈՒԱԿԱՆԸ

Մ Ե Ր Ն Ա Ն Ա Լ ՈՒ Ս Ա Խ ՈՐ ՈՒ Զ Ն Ե Ր Ը

Հայոց եկեղեցական պատմութիւնը իր սկզբնաւորումին մէջ ա՛յնքան չփոթ ու կոճուտ է՝ որքան մեր քաղաքա-կան պատմութիւնը նոյն դարուն մէջ։ Պատմական ստոյգ ու վաւերական տեղեկութիւններէ աւելի ունինք մը-թին աւանդութիւններու խառնակոյտ մը, որոնք չափ տարտամ կերպով մեզ կը խօսին Հայաստանի մէջ քրիստո-նէութեան մուտքի վերաբերութեամբ։

Պատմական տոկուն չէրերը, տա-րակոյտի՝ հետեւաբար և լուսաւորու-թեան սա դարուն մէջ մանաւանդ, քննադատութեամբ ճշգրտուած հիմի մը վրայ-միայն կրնան բարձրանալ։ Ա-ռանց այս վերջոյն, ոչ մէկ հաստա-տութիւն հնարաւոր կ'ըլլայ։ Եւ ա-ւանդութիւնները, որքան ալ խոր

հնութեան մը դրոշմով ներկայանան մեզ, ո՛րքան ալ դարեր մնուցած ըլլան իրենց անմատչելի նուիրականու-թեամբը, չեն կրնար լիովին գոհացնել տրամաբանօրէն ճշմարտախոյզ միտքը։ Քննադատութիւնը անողոր է։

Մեր նպատակ չունինք Հայոց նա-խալուսաւորիչները նկատուող զոյգ մը առարկաներու պատմութիւնները կամ աւանդութիւնները համադրելու հոս, ինչ որ 1903 ի Կրօնաթերթ «Լոյս»-ը կատարած է արդէն, այլ կ'ուզենք միայն մատնանշել պատմական քանի մը կէտեր կամ լուսաբանութիւններ՝ որոնցմով կ'զբաղի մանաւանդ այսօր-ուան քննադատութիւնը, և որոնք անհրաժեշտ են ներկայացնելու հա-մար Հայ եկեղեցին իր իսկական պատ-



կերովր, առանց վախճարու որ անիկա կորսնցնէ իր դարաւոր նուիրականութենէն ու արժէքէն բան մը: Ճշմարտութիւնը՝ իր ամենապարզ ձեւին տակ՝ աննուազ նուիրականութիւն մ'ունի արդէն իր մէջ միշտ և ամէն տեղ:

Հայաստանի լրստաւորութեան մասին մեր ձեռքը գտնուած աւանդական պատմութիւններուն ազդեւորները բոլորն ալ պղտոր են: Ասորականը՝ հայ (°) անբարեխիղճ և միամիտ ձեռնամուխի մը [interpolateur] միջոցով խառնուած ու բաղադրուած է անոնց մէջ: Հայաստանի և Ասորիի սահմանակցութիւնը, Հայերու և Ասորիներու ազգային հայրանուններու [éponyme] նշանակութիւնը, ըստ որում Հայերը կը նկատուին Արամի սերունդ և Ասորացի երկիրը կը կոչուէր նաև Արամ, յառաջ բերած են ապօրէն խնամութիւն մը երկու աշխարհներու պատմական կեանքին մէջ. խնամութիւն մը՝ որուն փութկոտ նուիրազործողը եղած է մանաւանդ մեր պատմահայրը՝ Մ. Խորենացին:

Հայոց լրստաւորութեան պատմութեան մէջ այդպիսի խնամութիւն մը ստեղծուած է Հայ Լաբուրնայով — վասին զի ասորական բնազդին հարազատ թարգմանութիւնը չէ այն — որուն կուրօրէն հետեւած է Խորենացի, Ասորի թագաւորի մը՝ Աբգարի գլուխը գնելով Հայոց աշխարհի թագը՝ որ այդ ժամանակամիջոցներում Հռոմի ինքնակալներուն կողմէ միայն կը չընդհանուէր Հայոց այս կամ այն իշխանաւորներուն:

Աբգարեւ ասորական պատմութիւնը մեզ ցոյց կուտայ թէ Աբգար անուանով — զոր Խորենացի գամագիւտ և

տղայական ստուգաբանութեամբ մը փորձած է հայացնել՝ հեղինակաւորելու համար անշուշտ իր զիւոր, — ինք թագաւորներ իշխած են Ոսրայենաց (= Ուռհայ) աշխարհին վրայ իբր բնիկ թագաւորներ, ամփոփուած իրենց երկրին սահմաններուն մէջ: Եւ քննական պատմութիւնը միւս կողմէն բնաւ չթոյլատրեր ընդունելու թէ այս երկու աշխարհները փոխադարձաբար իրարու գերիշխանութեան ներքեւ մտած ըլլան երբեք. բացի Ն. Ք. առաջին դարէն, որ ատեն Մեծն Տիգրան, որ իր աշխարհակալական արշաւանքները տարածած էր մինչև Փիւնիկէի խորերը և Պաղեստինական սահմանադրութիւնները: Բախտն ունեցաւ նաև նպատակաւորուելու Սելեւկեաններու ներքին երկարատեւ կռիւներէն և Ասորիներու իսկ հրաւերով, թէև ահամայ կատարուած, երթալ բազմելու Սելեւկոսներու գահին վրայ:

Հայոց «արքայից արքայ» ին կեդրոնախոյս այս աշխարհակալութիւնները սակայն հետզհետէ տկարացուցած էին արդէն անդգալաբար Հայաստանի ներքին ոյժը. այնպէս որ անոր մահէն յետոյ (55-54) Հայոց երկրին մէջ Հռոմայ տրծիւնները սկսան ազատ թռիչք առնել, մինչև այն թուականը՝ յորում Մեծն Խոսրով Պարթև — Արշակունեաց հարստութիւնը կը հիմնէր հայ հողին վրայ (223): Իսկ Ոսրայենաց աշխարհը այդ թուականներուն մերթ Պարթևներու և մերթ Հռոմայեցիներու գերիշխանութեան տակ կը մտնէր:

Դաւով Աբգարի դրոյցին՝ սցսօրաւոր քննադատներէն ոմանք չեն ընդունիր թէ Աբգար Ե. Ուրբամայ (= սեաւ), Քրիստոսի ժամանակակիցը, քրիստոնէութիւնն ընդունած ըլլայ, այլ Բ.



դարուն վերջերը ապրող Աբգար Թ., որուն ժամանակակից էր մեր Սանատրուկ անուն թագաւորը՝ զոր օտար պատմիչներ կը յիշատակեն (Հերովդոտոս 170-240. Պատմ. Հոռոխոյնցոց)։ Երբ միանգամ կ'ընդունինք թէ Ա. դարուն, 37-43 թուականներուն, Հայաստան բոլորովին անկախ էր Ասորոց աշխարհէն՝ ինքնին կը հերքուի այն վերջամուտ աւանդութիւնը թէ Աբգար և Սանատրուկ ազգականներ էին իրարու, և ասոր հետ մէկտեղ բոլոր այն մանրամասնութիւնները, որոնք իրողութիւններու բնագործման կարագիւրը եղծած են։ Ու երբ միւս կողմէ քննադատութիւնը իր հիմնաւոր պատճառաբանութիւններով կը հաստատէ թէ Աբգար Թ. ն է որ առաջին անգամ կ'ընդունի քրիստոնէութիւնը՝ ինքնին կը տարբարութեամբ նաեւ հայկա-ասորական աւանդութիւններու խառնաշփոթութիւնը, Հայաստանի լուսաւորութեան պատմութիւնը կամ աւանդութիւնը անշատելով ասորականէն։

Բայց ասի բաւական չէ։ Ինչպէս բացատրել գոյութիւնն ու դերը Ա. դարու Սանատրուկի մը՝ որ օտար պատմիչներու անծանօթ է և զոր ումանք կ'ուզեն, չեմ գիտեր ինչ փաստերու վրայ յենած, նոյնացնել Միհրդատի հետ, այն Միհրդատին՝ որ 37-41 բանտարկեալ մնացած է Կալիպոլայի հրամանով՝ ուստի և հինգ տարուան ընդհատ մը կը բացուի մեր պատմութեան մէջ։ Մենք այս առեղծուածին լուծումը կ'ուզենք տեսնել դարձեալ պատմական խնդրութիւնութիւն մը կամ շփոթութեան մը մէջ, ուր ինկած է Խորենացի։

Հայոց պատմահօր կողմէ Սանատ-

րուկի ընծայուած գէպերէն շատերը, ինչպէս անոր յարձակումը Եգեսիոյ վրայ, քաջ կը յարմարի Աբգար Թ. ի ժամանակակից Սանատրուկի։ Ըստ Խորենացիի «Սանատրուկ թագաւորեալ՝ զօրս ժողովէ... իջանել տալ պատերազմ ընդ սրդին Աբգարու, զի բոլորին տիրեացէ թագաւորութեանն» (Գիրք Բ. գլ. 15)։ Եգեսացիք պատգամաւորներ կը զրկեն «խնդրելով պայման ուխտի, զի մի վրդովեացէ զնոսա ի քրիստոնէութեան հաւատոյ, և նոքա տացեն գքալաքն ի ձեռս և զգանձս թագաւորին»։ Սանատրուկ նախ կը հաւանի և ապա ոտելով՝ «զամենայն զաւակ տանն Աբգարու մաշեաց սրով» (նոյն անդ)։

Աբգարու որդիներուն (°) և քեռորդիին (°) միջև յարաբերութիւններու այսպիսի անակնկալ խզում մը կարելի չէ բացատրել Խորենացիի մէջ բերած պատճառաբանութեամբ — «զի բոլորին տիրեացէ թագաւորութեան»։ Մեզ համար հաւանական են թաղարու-թիւնը այն է որ Հռովմա-Եգեսական կռիւը, որուն արդիւնք եղաւ Աբգար Թ. ի կալանաւորումը Կարակալայի ձեռքով, փոխադրուած է Հայկա-Ասորական գետին վրայ, Կարակալայի դերը տալով Սանատրուկի, որուն որդին Վաղարշ նոյնպէս արժանացած է Աբգարի ճակատագրին։ Եւ միւս կողմէ Խորենացիին «յետ մահուան Սանատրուկոյ շփոթի թագաւորութիւնն» խօսքը (Բ. 15) կրնայ նաեւ պատշաճիլ քաղաքական այս շփոթ իրադարձութիւններուն, որքան Միհրդատի հինգ տարուան բանտարկութեան ժամանակամիջոցը լեցունելու համար ստեղծուած Սանատրուկի մը մահուան յաջորդող թուականին՝ յորում Միհրդատ կրկին կը թագաւորէ։



Բայ աստի՝ Եւլեւթրոպոլիս, ուր Արգարու գետալանները, ըստ Խորենացիի, հանգիպեցան Հռովմայ կողմէ Փիւնիկեցիներու, Պաղեստինացիներու, Ասորիներու և Միջագետքի վրայ «ի գործ հազարապետութեան» կարգուած Մառինոսի, 200 թուականին միայն առած է այդ անունը։ Իսկ «Փղատ եպիսկոպոսը... ձեռնադրուած է Անտիոքի այն եպիսկոպոսէն որ ինքը նստել է աթոռ 190 թ. ին. մինչդեռ ըստ աւանդութեան, նա ելէց է եղել արդէն Եգիպտոյ առաջին առաքեալի ժամանակ»։ (Կարապետ վարդապետ — այժմ՝ եպիսկոպոս — Հայոց եկեղեցւոյ սրբաւարին, էջ 55, էջնիւմբին)։ Այս թուականները, ահա, կը յարմարին միայն Մարտի 1-ի և պատմական Սանատրուկի։

Արդ՝ եթէ Հայոց քրիստոնէութեան դարձը սերտիւ կապուած է Թադէոսի և ասոր ժամանակակից Սանատրուկի հետ, և եթէ միւս կողմէ քրիստոնէութիւնը Սանատրուկը կը փոխադրէ Բ. Դարուն մէջ, հա՞րկ է եզրակացնել թէ Բ. Դարը եղած է Հայաստանի լուսաւորութեան թուականը։

Այս մասին երկու ուշադրու կէտեր կան մեր պատմական երկու աղբիւրներուն մէջ՝ որոնք ամէնէն աւելի հնագոյնի գրչման ունենալ կը թուին՝ Փ. Բիւղանդ և Ագաթանգեղոս։

Առաջինը Սանատրուկի մասին ակնարկած ատեն՝ «առաքելաւորսն» մակդիրը կուտայ անոր (Դպր. Գ. — Գլ. Ա.) և բնաւ Արգարի խօսքը չըներ, ինչ որ նշան մը կրնայ նկատուիլ ինքնին թէ ո՛չ Հայկա—Ասորական միացեալ պետութիւն մը գոյութիւն ունեցած է այդ ժամանակա-

միջոցին, ո՛չ «յես մահոռանն Արգարու քաժանի քաղաւորութիւնն Հայոց յերկրաւ», ինչպէս կը գրէ Խորենացի (Բ. 17), և ո՛չ ալ հետեւեալ Հայաստանը Ասորիքի խողովակով ընդունած է քրիստոնէութիւնը։

Լուսաւորչի վկայաբանութեան մէջ մուծուած երկա՛ր քարոյին խմբագիրը (Ագաթանգեղոս ?) թուումն մասանցն ընելով բոլոր այն երկիրներուն՝ որ Քրիստոսի առաքեալներն ու աշակերտները քարոյեցին Աւետարանը, ո՛չ մէկ յիշատակութիւն չըներ Թադէոսի և Հայաստանի մասին։

Դիտար է անշուշտ վճռաբար լուծել այս կնճռոտ հարցը. ճշդել առաջինին բացատրութիւնը և բացատրել վերջինին լուծութիւնը։ Փաւստոսի վկայութիւնը աւելի կշիռ մը կըրնայ ունենալ ըստ ինքեան, քանի որ Ագաթանգեղոսի վկայաբանութիւններու հաւաքածոյ մ'ըլլալուն իրողութիւնը ամէն կասկածէ վեր է ըստ մեզ, և վկայաբանութիւններու պատմական արժէքը ոչինչ է ինքնին անոնց բարոյական գերազանց նկարագրին մօտ. թէև Փարպեցի, Ե. զարուն մեզ ամէնէն խղճամիտ պատմիչը, Ագաթանգեղոսը կը գոյլէ իրը «ստուգարան ի կարգադրութիւն ճառից և յարմարագիր ի պատմութիւնս ասացուածի իւրոյ»։ Իսկ Բիւղանդի մասին կը գրէ. «Գուցէ այլ որ յանգուզն և անհրաժանգ բանիւ լրբաբար ձեռն արկեալ յիւրն՝ գրեաց զինչ պէտս ըստ կամի և կամ զի ուրուք անկարեալ դիպողս՝ այլաբանեալ մնասեաց, և անուամբ Փաւստոսին զիւրոյ յանդգնութեանն սխալանս համարեցաւ ծածկել»։ (Տպ. Տիգրիս, էջ 2, 4)։

Ոչ ուսալ ուշադրութեան արժա-



նի է արդարեւ այն պարագան որ Փարպեցի ալ, ունենալով հանդերձ իր առջիկ Փաւստոսը, չգիտեր թէ Հայաստան լուսաւորուած է Թադէոսով և չգործածեր բնաւ «աթոռն Թադէոսի առաքելոյ» բացատրութիւնը, որուն կը հանդիպինք երեք անգամ Փաւստոսի մօտ (էջ 30, 41, 72) եւ անգամ մ'ալ Խորենացիի մէջ (Բ. զա)։ Այս զանցառութիւնը կրնայ մեկնուիլ երկու ենթադրութիւններով։ Կամ այն է որ Փարպեցի յանդգնութեամբ յիշաւ մը նկատած է այդ կէտերը, ինչ որ սակայն չստ հաւանական չէ, և կամ ա՛յն է որ իր առջիկ գտնուած Փաւստոսին մէջ այդ տողերը կը պակասէին և յետագոյն թուականի մը ձեռնամուկութիւններն են անոնք։

Բայց թէ իսկ քննադատութիւնը հաստատէ մեր վերջին վարկածը, առաջ մէկտեղ ամէն տարակոյտէ վեր կը մնայ թէ Փաւստոսի «առաքելապան» բացատրութիւնը առ նուազն կրնիսագոյն առանդութեամբ մը աւագանցը կրնայ նկատուիլ։

Ո՞րն է այդ աւանդութիւնը եւ ի՞նչ փաստերու վրայ կարելի է հիմնել զայն։

Աւելորդ է ըսել թէ ինդոյնիւթ եղող մակդիրը չէ կարելի պատշաճեցնել Բ. Գարու Սանատրուկին՝ Սեպտիմուս-Սեվերոսի (193—211) նիշակակցին։

Խնդիրը դիտենք ու քննենք տարբեր վերլուծումով մը։ Անշատերով հայկական և ասորական աւանդութիւններն իրարմէ՝ տեսնենք թէ արդարեւ առաջին դարուն Հայաստանի մէջ քրիստոնէութեան զոյութիւնը հնարուո՞ր է և կրնա՞յ պատմականապէս հաստատուիլ։

Ասորական աւանդութեան հիմը կը կազմէ Լաբուքնիան, կամ ըստ Խորենացիի, Ղերուբնա, որուն քննութիւնը մեր նիւթէն դուրս է։ Միայն կարեւոր է յիշել թէ անոր հայկական թարգմանութիւնը, որ հաւանաբար Ն. Գարու վերջերք կամ Զ.ին սկիզբները կատարուած ըլլալու է, պատճառ եղած է նաև հայկական աւանդութեան պղտորումին և պատասխանատու պատմական այս չփոթութիւններուն, թարգմանչին կողմէ ըստ կամի և նպատակաւոր յաւելումներ կատարուած ըլլալով բնագրին վրայ, որուն հնութիւնն ալ ամէն պարագայի մէջ բոլորովին անվիճելի չթուիր մեզ։ Միայն բաւական է ըւրջ նկատուած ման յանձնել բնագրին և թարգմանութեան այն խորհրդաւոր՝ այլ ըմբռնելի հակասութիւնը՝ ըստ որում առաջինին համար Թադէ բնական մահուամբ մեռած է Եղեսիա և հոն թաղուած, մինչ երկրորդին համար նա իր ճամբան շարունակած է «յարեւել»», ուր քարոզած ու նահատակուած է միանգամայն Բանք նաև անցողակի թէ համամիտ չենք Գեր. Տ. Կարապետ վարդապետի այն տեսութեան՝ ըստ որում «ասորական և հայկական աւանդութիւններու միմեանց հետ կապուելու գլխաւոր պատճառն ևս այն կարելի է համարել որ ամենայն հաւանականութեամբ Եղեւսիայից եկած քառովներէի մեղմով պիտի տարածուած լինի քրիստոնէութիւնը Հայերի մէջ։ Այդ հաստատում է ի միջի այլոց Խորենացու պատմածը Բարդաճանի մասին, թէ նա Հայաստան է եկել քարոզելու և մաքառել է իւր գրուածներով Մարկիոնեանց դէմ» (Հայոց Եկղ. Պատմ. էջ 56—



37): Եթէ Խորենացիի յիշած «վերջին Անտոնինոս»ը Անտոնինոս Կոմոզն է՝ Բարդաժան Բ. դարու (180—192?) պատմագիր է, և այդ թուականին անոր ունեցած քարոզչական գերը Հայաստանի մէջ չկրնար ապացոյց ըլլալ հաստատելու համար վերեւ մեր կողմէ ստորագծուած ենթադրութիւնը: Ընդհակառակը Մարկիոնեան աղանդաւորներու գոյութիւնը մեր երկրին մէջ Բ. դարուն՝ նշան մ'է ինքնին թէ քրիստոնէութիւնը աւելի կանուխ մուտ գտած է Հայաստան:

Կան նաև ուրիշ նշաններ:

1. «Գործք Առաքելոց»ի Բ. գլ. 9-11 համարներուն մէջ յիշատակուած են կարգ մը ազգերու և երկիրներու անունները: Տերտուղիանոս (160-240), և իրմէ վերջ Օգոստինոս (334-430) անուններու այս չարքին մէջ Հրէաստանը կարդացած են Հայաստան: Մէջ բերուած երկիրներու աշխարհագրական դիրքը լիովին կ'արդարացնէ այս ընթերցումը կամ որդագրութիւնը:

Ասի ցոյց կուտայ թէ գէթ Ա. դարուն վերջին կիսուն, յորում խմբագրուած է ամենայն հաւանականութեամբ Գործք առաքելոցը, կը գրուէին արդէն Հայաստանաբնակ «երկիւղած» հրեաներ, որոնք իրենց շարունակական յարաբերութիւններուն շնորհիւ Երուսաղէմի հետ՝ յաջողած էին քրիստոնէութեան կորիզ մ'ալ փոխադրել հայկական հողին վրայ, առանց ասորական միջնորդութեան. կորիզ մը՝ զոր «ընդ ամենայն տեղերս» քարոզելու ցրուող առաքելներէն մին անհարակոյս պիտի փոքար արգասաւորել եւ քարգաւառացնել:

2. Ի՞նչ այդ կորիզը իր կեանքը ունեցաւ Ա. դարէն սկսեալ՝ վկայ են

բիւր մը գինուորները, որոնք Անդրիաշոս կայսեր (117-138) և մեր Արտաշէսի (117-138) որով Արարատ լեռան վրայ խաչի մահով նահատակուեցան, ինչպէս կը կարդանք լատինական վրկայաբանութեան մէջ: «Մեկիսինեան» գնդին հետ կապ ունեցող այդ գինուորները, ինչպէս իրաւամբ կ'ենթադրէ Կարապետ վարդապետ, բնականաբար պիտի ապաւինէին այնպիսի երկիր մը՝ որ առաւել կամ նուազ ծաղկած քրիստոնէութիւն մը ըստ կարելոյն ապահովէր զիրենք վտանգին դէմ: Ապա թէ ոչ անիմաստ պիտի ըլլար անոնց փախուստը:

3. Աղեքսանդրիոյ հայրապետներէն Դիոնետիոս (248-266) ընդհանուր եկեղեցին յուզող ապաշխարութեան խնդրին առիթով՝ թուղթ մ'ալ կը գրէ Հայոց «որոց եպիսկոպոս էր Մեհրուժան»: Մեհրուժան անունը ինքնին բաւական է ըստ մեզ հաստատելու թէ նա Մեծ Հայոց եպիսկոպոս էր և ոչ թէ Փոքր Հայոց, ինչպէս կը կարծեն ոմանք, վասն զի վերջնոյս մէջ աւելի յոյն կամ յունական անունով եկեղեցականներ պէտք է փնտռել՝ քան թէ հայեր:

4. Յիշե՛ք նաև Ոսկեանց և Սուքիասեանց նահատակութեան պարագան: Վերջինները, որոնք կը նկատուին աշակերտ առաջիններուն, մարտիրոսացած են Շապուհի օրով (241-271), այսինքն այնպիսի ժամանակամիջոցի մը՝ երբ Հայաստան Մեծն Խոսրովի մահուամբ Պարսիկ պետութեան խայծը եղած էր մինչև Տրդատի վերադարձը Դիոկղետիանոսի ձեռքով (287):

Ասոնք և ասոնց նման ուրիշ նշաններ պայծառ կերպով ցոյց կուտան



թէ քրիստոնէութիւնը Ա. դարէն սկսեալ մուտ գործած է Հայաստանի մէջ և հերքնապէս ծաղկած ու ծաւալած մինչև այն թուականը՝ յորում Անտիի որդին Գրիգոր պետական կըրօնը մը դարձուց զայն:

Իսկ թէ ի՛նչպէս պէտք է լուծել Սանատրուկի առեղծուածը՝ ահա մեր կարծիքը:

«Առաքելապան» Սանատրուկը ո՛չ Խորենացիի ստեղծածն է (37-41) և «զոր կարգեալ էր (Աբգար) ի վերայ աշխարհին և զօրացն» (7), և ո՛չ ալ օտար պատմիչներու յիշատակածը (Բ. դար): Բարթողիմէոսի վկայաբանութեան մէջ, որ հաւանաբար Ե. Գալուսն թարգմանուած է Հայերէնի, կը կարդանք «ի քառանկէսն իննետոթ ամի Սանատրուկ թագաւորին եմուտ սուրբ առաքեալն Բարթողիմէոս... ի Հայք»: Հոս յիշուած Սանատրուկը, նկատի առնելով ժամանակաշրջանն այն իրոշոր հանգոյցը՝ զոր յառաջ կը բերէ անոր թագաւորութեան 23 տարուան երկար շրջանը, պէտք է ըլլայ Աղբաւի կի կամ Վասպուրականի իշխան մը՝ ըստ քննական պատմութեան: Եթէ պիտի ընդունինք Սանատրուկի մը գոյութիւնը Ա. Գալուսն մէջ՝ իբրեւ իշխան Հայաստանի այս կամ այն նահանգին, բնաւ անտեղի չէ ըստ մեզ մտաբերել թէ նոյն այս իշխանի ձեռքով է որ նահատակուած է Թադէոս:

Ուշագրութեան արժանի կէտ մ'է նաև այն որ այս վկայաբանութեան մէջ Հայաստան կը կոչուի «վիճակ Թադէոսի» (Սովեբը ԺԹ. էջ 24), և Յուդա Յակոբեանը, որ ըստ Աւետուրանի մեկնութեան, Ղերէոս-Թադէոսն է, կ'որոշուի անկէ, Թադէոսը նկատելով «յեւթանաանից» և Յուդա Յա-

կոբեանը՝ «ոմն յերկոտասանից»: Սխառած չենք ըլլար կարծեմ եթէ այս ալ հոմանունութեան շփոթութեան մը ծնունդ ենթադրենք: Հայաստան վիճակն էր Ղերէոս-Թադէոս-Յուդա Յակոբեան առաքեալին, որ երկոտասաններէն մէկն էր և «ի բլուրն Արսազու» (փոխանակ Արսազու) հանդիպելով պատահամբ Բարթողիմէոս առաքեալին՝ կը բաժնուի անկէ «զնացեալ յիւր տեղիսն» (Արսազ ?). իսկ Թադէոս կամ Ադէ 72ներէն էր, որ քարոզած էր Ասորիքի մէջ. մեռած եղբսից մէջ և զոր Լաբուրնիայի Հայ թարգմանիչը փոխադրած էր Հայաստան, և այսպէս՝ Ղերէոս - Թադէոս - Յուդա Յակոբեան «յերկոտասանից» առաքեալը լայնացած և շփոթած է Թադէոս-Ադէ «յեւթանաանից» առաքեալին հետ, միոյն քարոզչական կեանքն ու գործունէութիւնը միւսին վերագրուելով: Երկոտասանից Յուդա Յակոբեանի յիշատակութիւնը սոյն վկայականութեան մէջ անշուտօրէն եօթանասնից Թադէոսէն և անոր ներկայութիւնը Արտազու կամ շրջակայքը, միւս կողմէ ապացոյց մ'է թէ առաջական աւանդութիւնն անկախ զուտ հայկական աւանդութիւն մ'ալ կար՝ որ Հայաստանի լուսաւորութեան գործը կը վերագրէր Ղերէոս-Յուդա-Թադէոսի:

Եզրակացութիւն. — Աբգարու զրոյցը հայկական ոչ մէկ գրաւոր չունի: Սանատրուկ անունով թագաւոր մը իբրեւ քեռորդի և հպատակ Աբգարի և ապա թշնամի Աբգարի որդիներուն և գերիշխան Ոսրայինաց աշխարհի, գոյութիւն չունի պատմականապէս: Աբգար Ե. Ուրբանայի անձը շփոթուելով Քրիստոնէութիւնը ընդունող Աբ-



դար Թ.ի հետ, վերջնոյս ժամանակա-  
կից Սանատրուկն ալ (Բ. դար) փո-  
խադրուած է Ա. դարուն մէջ և նոյ-  
նացած Աղբակի կամ Վասպուրականի  
իշխան Սանատրուկի հետ, որուն ձեռ-  
քով նահատակուեցան նախ Թադէոս-  
Յուդա Յակոբեանը Արտազու մէջ (37-  
62) <sup>(1)</sup> և ապա Բարթողիմէոսը Աղբա-  
կի(?) մէջ (37-62) <sup>(1)</sup> : Հայաստանը ի-  
րեն վիճակ ունեցող Ղերէոս-Թադէոս  
Յուդա Յակոբեանի անձը չփոխուած  
է Ուռհայի մէջ քարոզող և մեռնող  
Թադէոս-Աղէի անձին հետ :

Ըստ այսմ Հայաստանի լուսաւորու-  
թեան թուականն է Ա. դարը և նա-  
խալուսաւորիչները ԹԱԴԵՈՍ և ԲԱՐ-  
ԹՈՂԻՄԷՈՍ երկուստանից առաջ-  
եալները, որոնց տօնախմբութիւնը  
կատարեց նոյեմբեր 28ին ՀԱՅՈՑ Ե-  
ԿԵՂԵՅԻՆ :

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ <sup>(2)</sup>

### ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Պէտք զիտէք, սիրելի բարեկամք իմ,  
որ ես իմ պարագմունքներով նուիրուած  
եմ արեւելեան հին ազգերու պատմու-  
թեան ուսումնասիրութեան, թէեւ աշ-  
խարհական՝ մեծ ուշադրութիւն դարձու-  
ցած եմ սկիզբէն ի վեր թէ՛ եկեղեցական  
պատմութեան և թէ՛ քաղաքական պատ-

(1) Նահասակութեանց քուականը հեղել անըն-  
գար է :

(2) Այս գրութիւնը մաս կը կազմէ այն նախա-  
կին՝ զոր հոգակաւոր պատմաբան եւ գերմանական  
արժուէի խորհրդական ուսուցչապետ Հայնրիխ Գեյ-  
ցեր գրած է ողբացեալ Տէր. Արեակ Տէր-Միքէլ-  
եանի : Արտասպառ եմ հայ տոբորին « Հայաստան-  
եայց եկեղեցին եւ Բիւզանդական ժողովոց պարա-  
գայք » անուն կարեւոր գործէն, խորհելով թէ օտարի  
մը կարծիքն ու թելադրութիւնները մեր եկեղեցիին  
մասին, կրնան իրենց արդիւնաւոր դերն ունենալ :

մութեան Բական մասին և այս բե-  
րումով զբաղուած եմ բաւական մանրա-  
մասնութեամբ Անտիոքայ տաճարական եկե-  
ղեցիի, Եգիպտոսի Ս. Մարկոսի և Հայոց  
Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցիներու  
պատմութեամբ : Ես չեմ կրնար ըմբռնել  
ընթացքը գերմանական ուսումնասիրման  
բուն, որոնք սնուցած, միանգամայն եւ  
անհանձար ու յիմար գաղափարը յայտնի,  
որ իբր թէ Հայոց ազգային անբախտու-  
թիւնը արդիւնք է քրիստոնէութեան ըն-  
դունելնուն : Իբր թէ Հայոց ճակատագիրն  
եղած է իրենց լեզուակից եւ բարոյակից  
Պարսիկներու հետ մազդեզն խոստովանել :  
Ինչ յիմարութիւն ընդունած ըլլային Հա-  
յերը կրակապաշտութիւնը՝ այդ տաղա-  
կազոյնն և ամենաջնիւր հեթանոսութեան  
մեծ վարդապետութեան մէջ, այն ժամա-  
նակ, է. Դարում, երբ Իսլամն իր վար-  
դապետութեամբ Արեւելքը նուաճեց, Հա-  
յերը մահմետական կ'ըսուէին, և այսօր  
լաւագոյն լռութեան մէջ սնուցած կը լի-  
նէին, ինչպէս իրենց դրացի Քուրդերը :  
Քրիստոնէական վարդապետութեան խոս-  
տովանումն բերաւ Հայոց համար բոլոր  
դարերում սարսափելի հալածանքներ և  
չառ արեւնաթօր նահատակութիւններ :  
Պէտք չէ ձեռք, որ տեղական պատմու-  
թիւնը չառ լաւ գիտէք, երկար մանրոյ-  
մասնել, թէ ո՞րպիսի սոսկալի նեղութիւն-  
ներ կրկու ստիպուեցան Հայերը Սասան-  
եան Պարսիկներէն, արաբական Սալիֆա-  
ներէն, Նոր Պարսիկներէն, և ըն. :

Սակայն, աղէտներու բոլոր դարերում  
Հայ ազգը պահպանած է իր ամենաթան-  
կազին գոնարը, իր քրիստոնէական հա-  
ւատքը, և ջանք չէ՛ շտրժած : Ուստի եւ  
Աստուծոյ օրհնութիւնը կ'իջնէ յայտնապէս  
Հայոց առատահանձար ազգի վրայ, եւ ես  
հաստատ համոզուած եմ որ ապագայ դա-  
րերում Հայ ազգը զեւ մեծամեծ իրերու  
համար է սահմանուած :

Բայց իր ապագայ տիեզերապատմական  
կոչման քաջարար նախապատրաստելու  
համար, ազգը պէտք ունի հաւատարիմ և  
նախանձաւոր վարդապետներու, լուրջ  
խրատող հոգեւորականներու և օժիտ



սուրբ քահանաներու որոնք իրենց հաւատացեալ հօսն առաջնորդեն Քրիստոսի շուղին վրայ :

Այսօր, ցաւալի է, որ ժողովուրդը բազմապատիկ խրուած է արտաքին ծխապաշտութեան մէջ, անոր նշանաւոր անդամները գերազանց վաճառականներ են, սակայն այնպէս խրուելով՝ երկրային բարեքնելու, ոսկիի և արծաթի հաւէն ինկած, որ անոնք այդ բանին մէջ կը մոռնան ճշմարիտ մարգարիտն որոնելու, զոր յայտնի վաճառականն Աւետարանին մէջ կը փնտռէր, և երբ գտաւ զայն, ծախեց իր բոլոր ստացուածքը՝ այդ թանկագին գոհարը ձեռք բերելու համար : Անհաւատութիւնը՝ որ կիսատ և անհիմն իւրացումով մը արեւմտեան լուսաւորութեան հետ զինքը թիթեապէս միայն զօդած է, յաջողութիւն ունեցած է, ինչպէս որ դուք ձեզնի խոստովանեցաք, նաեւ Հայկի զարգացեալ որդիներու մէջ և թէ հարկու գարգացելոյ և մանաւանդ ժողովրդի մէջ բազում ճշմարիտ և համոզանուէր քրիստոնեաներ իսկ կան, ասով մէկտեղ, միւս կողմէն, ինչպէս որ շատ ժողովրդագէտներու տեղեկութիւնները համաձայն են՝ քահանաներու և աշխարհականներու մօտ քրիստոնէութիւնը մասամբ սուղուած է արտաքին ձեւապաշտութեան մէջ : Ուստի, յիշեցէք դուք Եսայի մարգարէի սոսկալի խօսքերը, զոր, Քրիստոս, մեր Տէրը և Փրկիչը ըսաւ Հրեաներուն. «Կեղծաւորք բարեւոք մարգարէացաւ ի վերայ ձեր Եսայի՝ և ասէ. ժողովուրդս այս չըթամք պատուէ զիս, և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն :» (Մատթ. ԺԵ. 7)

Աստուած մի, արասցէ որ այս սոսկալի խօսքերը Հայկայ ժողովրդի վրայ ստուգուին և նա աստուածային հրամանով՝ նման դատաւճիռ մը կրելու ստիպուի, ինչպէս Հրէից դժբախտ ժողովուրդը : Ուստի վեհագոյն է այն խնդիրը, որ կ'մնայ այդ ժողովրդի ուսուցչին : Դուք պէտք է որ Հայերը վերստին երկիւղած և քաջ ժողովուրդ դարձնէք, ինչպէս եղած են Ս. Գրիգորի, Ս. Սահակի և Ս. Ներսէսի օրերով : Յիշեցէք թէ ինչ որ սուրբ առաք-

եալն Պետրոս իր առանձին թուղթին մէջ հաւատացեալներուն կ'ըսէ. «Դուք ազգէք ընտիր, քահանայութիւն թագաւորական, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրեցէք այնմ՝ որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն : Որք երբեմն չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ Աստուծոյ, որք չորոմեալք՝ այժմ ողորմութիւն գտէք :»

Մեր դարուն արեւմտեաններու մէջ հետաքրքրութիւն մը արթնցած է արեւելեան ազգերու նկատմամբ : Անգլիան և հիւսիսային Ամերիկան, նաեւ Գերմանիան Զուիցերիան, բազմաթիւ քարոզիչներ զբրկած են, որոնք Հայոց, Ասորոց և Դրպալիներու մէջ գործել ուզած են : Այդ չէ՛ ճշմարիտ ճանապարհը. անոնք կ'ողզեն իրենց նորոգող կամ Լուսեբական եկեղեցին Հայոց շատ հնազոյնին վիզը կապել : Իմաստութիւնը զինքը պատժել պիտի տայ իր որդիներուն : Այդ չէ՛ այն ճանապարհը՝ որով Հայաստանեայց Ս. եկեղեցիի վերածնունդը պէտք է պատրաստել. ասի պե՛տք է կաթարի ի ներքոյս (մե՛նք կ'ստորագծենք. Խմբ.) : Այդ օտար պատուիրակները, ինչպէս և Հռովմայ որդիքը, երկպառակութիւն և բանակութիւն կը բերեն Քրիստոսի փարախին մէջ : Գիտեմ որ շատ աւետարանական (Հռովմաբողոքական) քրիստոնեաներ կը դատապարտեն այդ քարոզութիւնը արեւելեան ժողովուրդներու մէջ : Մենք կ'ուրախանանք երբ Հայկայ որդիներ կուգան մեր մօտ և արեւմուտքի մէջ արեւմտեան զարգացումն ու Գերմանական գիտութիւնը կը սեփականեն : Ապա ուրեմն, սակայն, ոչ թէ օտարներ՝ այլ իրենք պէտք է գործեն իրենց ժողովուրդին մէջ, և զանոնք լուսաւորեն, անոնց սորվեցնեն, որպէսզի նա, ինչպէս նախկին դարերուն մէջ, դարձեալ երեւելի դիրք մը բռնէ ուսեալ ազգերու մէջ : Ես համոզուած եմ որ եթէ Հայաստանը ընդիլ լուսամբա քահանաներու միջոցով նոր կենսաղօր քրիստոնէական հաւատքի մը համար, այն ժամանակ ազգային կեանքն ալ նոր զօրութիւնով մը կ'արթննայ և էջմիածնի փառքը վե-



րոտին կը ճառագայթէ, ինչպէս հին ժամանակները:

Մեծ խնդիր մը կ'սպասէ տակաւին Հայ ազգին և մանաւանդ անոր Ս. եկեղեցիին, իր քահանաներուն և վարդապետներուն: Բոլոր այն ժողովուրդներուն մէջ՝ որոնք հին եկեղեցիի, Կիւրեղ Ազնկսանդրացիի և ուրիշ սուրբ հայրերու հաւատքին հաւատարիմ մնացած են, այն է՝ Եգիպտացիներու, Ասորիներու, Եթովպացիներու և Հայերու մէջ, Հայկայ որդիներ միակն են, որոնք կատարելապէս և ամբողջապէս իրենց որդիներուն մեծ մասամբ արեւմտեան քաղաքակրթութիւնը սեփականած են, ուրով և մեծ առաւելութիւն ունին իրենց ի Բրիտանո եղբայրներուն վրայ: Ըստ այսմ անոնց կը մնայ մեծ պատասխանատուութիւն մը. անոնք Բրիտանոն՝ ճշմարիտ հովուապետէն հաստատուած են և պէտք է հսկեն որ այդ հնագոյն և մեծաշարք եկեղեցիներուն մէջ աւետարանի, առաքեալներու և Ս. հայրերու աւանդած ճշմարիտ վարդապետութեան ջանք չչիջուցուի: Արդ՝ եթէ Հայոց եկեղեցին կրկին ունենար լաւամտիւ քահանաներ՝ որոնք քարոզին հին եկեղեցիի վարդապետութիւնն ու հաւատքը անկեղծութեամբ և սրբութեամբ, չ'ընէ մարդու՝ այլ Աստուծոյ զօրք կատարել կամենան, այն ասին պարտաւոր են անոնք ևս այդ տկար եղբայրները ընդունիլ և զօրացնել զանոնք. զանոնք՝ որոնց սրտայլի կը լարեն Հռովմայ պատուիրակ ժողովիները, և ցուալի է որ շատ Ասորիներ և Ղարիներ ատոնց թակարդին մէջ կ'իջնան: Հապեշխատանի մէջ լաւագոյն է. այնտեղ քրիստոնեայ կայսրերը՝ Թէոփոս և Յովհաննէս, սուրբ նախնաձախնդրութեամբ վաշտեցին այդ ոչխարաղղիստ գայլերը, նաեւ թագաւորած Նեփուս Նեղեստէ Մենելիքն Շօայի՝ հաւատարիմ որդի մ'է Ս. Մարկոսի եկեղեցիին:

Իմ անձնական կարծիքովս, զոր որպէս աշխարհական և օտար կ'առաջարկեմ միայն ամենախոնարհաբար, յարմար ժամանակ է որ, եթէ աշխարհական կառավարութիւնները զժողովութիւն չ'են յարուցաներ, ամենայն Հայոց Կաթողիկոսը հնադաւան

եկեղեցիներէն ժողով մը գումարէ կամ էջմիածնի և կամ Կարինի մէջ, ուր հրաւիրուին նախ Սոյ և Աղթամարայ երկու Կաթողիկոսները, Կ. Պոլսոյ և Ս. Երուսաղէմի Պատրիարքները, Հայաստանեայց ուղղափառ եկեղեցիի համօրէն Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպոսները և նշանաւոր Վանահայրերն ու Վարդապետները:

2) Ս. Պետրոսի Անաիոքայ աթոռի յաջորդը, ուղղափառ Ասորիներու Յակոբիկներու ի Մերսին և արեւելքի Մարիթաններու Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպոսները և յիսնագոյն վանահայրերը Ասորիներու Ս. եկեղեցիին:

3) Ս. Մարկոսի Ազնկսանդրոյ աթոռի յաջորդը, ուղղափառ Եգիպտոսի Պապը և Եգիպտոսի, Լիբիայի և Պենտապոլիսի եպիսկոպոսը իր բոլոր կուսակաւն եպիսկոպոսներով, նիթրական և սկիտական անապատի վանքերու, ինչպէս նաեւ Ամբասակեր, Մարբուս, Մար Անտոնիոս և Նիթրական անապատի Ասորոց վանքերու առաջնորդներով մէկտեղ:

4) Ս. Մարկոսի աթոռէն կտրեալ Եթովպական քրիստոնեաներու ներկայացուցիչները, Հապեշխատանի մետրապոլիտը կամ Արուսեան և վանապետն Դերբա Տաբորին ի Շօա և ուրիշ քանի մը երեւելի և ուսեալ հոգեւորականներ Եթովպական բարեպաշտ ժողովուրդէն:

Եթէ կարելի ըլլար՝ թէ ևս ինքս կը տարակուսիմ արաքիւն պատճառներու համար՝ այդպիսի ժողով մը գումարել, նոսր վարդապետութիւն չէր ունենար քորդելու... այլ Հայոց, Ասորոց, Եթովպացւոց և Եգիպտացւոց Ս. եկեղեցիներու Ս. Պատրիարքները, եպիսկոպոսներն ու վարդապետները կը խոստովանէին թէ իրենց հաւատքը ընդհանրական է և նոյն, զոր առաքեալները Բրիտանո բերնէն լսելով՝ մեզ աւանդած են, զոր առաջին դարերու Ս. հայրերը թողած են յիսնիւրուան, զոր 318 հայրերը Նիկիոյ մէջ (325 ին), 150 Կ. Պոլսոյ մէջ (381), Նոր Հռովմի մէջ, և 200 հայրերը Եփեսոսի մէջ (431) հաստատած են և որ յաւէտ ճշմարիտ և անրիժ հաւատքն է եղած չորս և



կեղեցիներուն : Եկեղեցիի սրբազան և բարձրագոյն վարդապետներու այդպիսի հրապարակային և հանդիսաւոր խոստովանութիւն մը Ս . հայրերու ճշմարիտ հաւատքին՝ անշուշտ մեծ ազդեցութիւն կը գործէ ազգերու վրայ , կ'ամրացնէ տա-

նաւունդները , կ'ոչնչացնէ Հռովմայ խաղաղախ յարձակումները :

Ընդունեցէք այս խոնարհ խօսքերը իբրեւ խօսքերը Հայաստանի հաւատարիմ բարեկամի մը՝ որ աղօթքի և բարեխօսութեան մէջ յաճախակի կը յիշէ Հայոց ազգը :

Հ. ԳԵԼՅԵՐ

## ԿՐՈՆԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ՀԱՒԱՏՔ ԵՒ ԳՈՐԾՔ

Հաւաստի ցոյցեր վերնագրին տակ մերթ ընդ մերթ յառաջ պիտի բերենք քրիստոնեայ նշանաւոր միտքերու խորունկ մտածումները . սակայն մեր նպատակը պիտի ըլլայ , իբրեւ հոգեւոր պաշտօնեայ , ո'չ թէ լոկ հաւատքի ջատագովականը հիւսել , հաւատքը պանծացնել իբր զուտ վերացական բան մը , այլ տեսնել թէ քնարեղ զուտ հաւատքը ո'րքան կ'արդարանայ գործքով իրական կեանքի մէջ :

Հաւատքը քրիստոնէական առաջին եւրեք դարերու մէջ իր գերազանցութեան հասած գործքն է : Պատուական մարտիրոսները , ոմանց կարծածին պէս մտեռանդութեան (եփղազ) զոհեր չեն , անոնք Տառապանքի Կրօնքին բարձր իմաստասիրութիւնը ըմբռնած , ճշմարտութեան , մաքուր սկզբունքներու յաղթանակին համար անդրանիկ կռուողներն ու ինկողները եղած են :

Անոնք իրենց կեանքին գինովը ապացուցած են թէ «Հաւաստի առանց գործոց մեռեալ են» :

Ուրեմն Հաւատքի մարդիկ Գողափարի մարդիկն են , որ լոյսը կը փնտռեն մշտաւոր խուզարկութեամբ : Ասոր համար Բապէժօժի նման մեծ գիտնականները , ըսենք անկեղծ հաւատացողները , յաջողած են իրենց գիւտերուն մէջ :

Հաւատքը , իր քրիստոնէական բուն առումով , Կրօնքի լոյսն է , զազանիքներու լուսաբանութիւնն է : Ան խուսար չընդունիր : «Եւ խաւար ոչ եղիւ նեւա հաւատ :»

Ահա՛ թէ ինչո՞ւ քրիստոնէական հաւատքը բարձր է բոլոր կրօնքներու երկարմատեան դրութիւններէն , որոնց մէջ լոյսն ու խաւարը հաւասարապէս աստուածացած կ'գտնենք : Այսօրուան յառաջագէմ քաղաքակրթութիւնները լուսաւոր հաւատքի ծնունդներն են : Ամէն ժամանակի մտաւորականութեան փարոսը եղաւ ան և տարաւ զայն անձանթ հորիզոններու , անկոխ գեալներու վրայ : Անով ծագած է գիտութեան առաւօտը մարդկային իմացականութեան առջև , որուն համար լոյսն ու գիտութիւնն ալ հոմանիշ են իրարու :

Ուստի , չենք հասկնար երբ հաւատքի պաշտօնեաները սգէտ և կոյր կ'համարուին ոմանց կողմէ ի յառաջագունէ տեսութեամբ մը : Այսօր Հայ զարգացած կղերը առաւել քան երբեք գիտէ թէ իր առաջին նուիրական պաշտօնն է գիտութիւնը պահպանել , վստահ Սատուածաշունչի վսեմ պատուէրն է . «Շրթունք քահանային զգուշացին գիտութեան» , այսինքն քահանային չրթունքները թող պահպանեն գիտութիւնը :

Տաճարը Հաւատքի , Գիտութեան , Լոյսի տաճարն է . արդէն աննախապաշար հաւատքը իր մէջ չի՞ խտացնիր և չա՞նդրադարձներ գիտութիւնն ու լոյսը :

Այս Տաճարը , սակայն , պէտք է ըլլայ նաեւ Բարութեան տաճարը :

Միայն քրիստոնէական բարոյականի սուրբ սկզբունքներու ճաշակը տալ մեր նախանձախնդիր ժողովուրդին , այս չի՞ բաւեր . մենք մեր անձին օրինակովը բարի և բարեգործ ըլլալնիս ցոյց տալու եղբ ա՛մէն ատեն ու ամէն տեղ :



Հաւատքը առանց բարեգործութեան մեռած բան մը կ'ըսենայ : Հարժեր պարծիլ անով :

Մենք որ մեզի բնաբան առած ենք «Հաւատք և գործք», զրկուածներու եւ թշուառներու մխիթարութեան նուիրելու ենք ամբողջ սրտով, ամբողջ հոգիով :

Չէ՞ որ մեր աչքերուն կ'պատկերանայ ողջակիզուած Կիլիկիան իր բովանդակ ահաւորութեամբ, իբր վերջամիասցութիւնը դարերէ ի վեր նահաւսակ Հայութեան : ո՛չ, անհար է անտեսել այդ դժնդակ աղէտքին զգուելի մնացորդները և չզուրգուրալ անոնց վրայ :

Ա՛հ, մենք որ կ'երգենք մեր լարութեան համար տառապած քաղցրիկ Յիսուսին, «Որ հայրդ ես որոց և դատաւոր այլեաց», այո՛, աւագ պարտականութիւն ունինք զանոնք հոգալու, ո՛չ միայն օգնութեան հրաւէր կարգալով, այլ նաեւ անոնց օգնելով իսկ, քանի որ մեր զթոռ Մեծ Վարդապետը մեզ սովորեցուցած է. «Նախ առնել եւ ապա ուսուցանել» :

Ուրեմն լսկ պիտի չգրենք ու չքարոզենք, այլ պիտի գործենք յօգուտ կարօտեալներու : Դարձեալ հաւատքի հետ գործը պիտի կապենք : Ինչպէս բարեջրմէն ետքը Յեզաիաիսութիւն կուգայ, Հաւատքէն ետք Գործ պէտք է գայ :

Հաւատքը կուռ համոզման արդիւնքը եղող ճշմարիտ գործն է բոլոր ինքեան :

Հաւատքը կատարեալ անկեղծութիւնն է և գիտակից անձնագործութիւնը :

Հաւատքը գրկապինդ նուիրումն է լուսազոյն Ապագայի, որուն ճամբուն վրայ զանուած փուշերը, դերբուկ ժայռերը, Գողգոթաները կարծես զգալի ընել չիտար :

Հեռեւորաւ, կ'փափաքենք որ արգի եկեղեցական ու աշխարհական մտայնութեան անխախտ դաւանանքն ըլլայ «Հաւատք եւ գործք» :

Մի՛ իրաւիք ճշմարտապէս հաւատալէ, ո՛վ դարուս զաւակները, վտան զի ճշմարիտ հաւատքը, նորէն կրկնենք, լոյս եւ գիտութիւն կ'ընէ : Իսկ թո՛ղ ձեր գործն ըլլայ միշտ բարութիւն ու բարեգործութիւն : Հայուն ծով թշուառութիւնն ամուրիւ համար :

ՅԻՐԱՅԸ ՎԱՐԴԱՊԵՏ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹԻՒՆԸ

Ուշագրաւ էր ու մխիթարական հրատարակութեան ձեռնարկը Տաճար կրօնութեան, որուն երեւումն այսօր անհուն ինքնութեամբ ողջունելով, կը բաղձանք որ մեր եկեղեցական ու աշխարհիկ եղբայրները քաջալերել զիսնան դայն :

Տաճարի հրատարակութիւնը թէեւ մեր ներկայ կրօնական ու բարոյական բազմապահանջ պէտքերուն ընդհանրապէս կրնայ բաւարարութիւն տալ, այսինքն կրօնական առողջ դաստիարակութեամբ օժտուող հոգեւէր անձեր կրնան օգտուիլ անկէ, և սակայն կայ նաեւ ուրիշ կենսական ու անհրաժեշտ պէտք մը, կրօնական դաստիարակութեան պակասը մեր դպրոցներուն մէջ, զոր մասամբ միայն կրնայ լրացնել ներկայ կրօնութիւնը :

Այն չեղտուած անտարբերութիւնը, որ կը տիրէ այսօր Պոլսոյ և գաւառներու մէջ հանգէպ կրօնական իրերու, և այն դատապարտելի զանցառութիւնը, զոր ունեցած են մեր թաղային վարժարանները կրօնի ուսման վերաբերութեամբ, առիթ կուտան մեզ հրապարակաւ կոչում ընելու Հայ ծնողներու, որպէս զի հոգածու գտնուին անտիական մանուկներու կրօնաբարոյական դաստիարակութեան : Յաճախ կը գանգաւորենք թէ ժողովուրդը ընդհանրապէս ու նոր սերունդը մասնաւորապէս չհետաքրքրուիր կրօնական իրերով, ու կ'ուծանայ չարուհակ եկեղեցիէն, եւ սակայն կարծես թէ պատճառները չենք ուզեր որոնել : Եթէ կը փափաքենք ունենալ գիտակից հաւատքով զօրացած կրօնաւէր ժողովուրդ մը, որ գիտնայ իր եկեղեցին սրբազան պատմութիւնը, վարդապետութիւններն ու դաւանութիւնները և գնահատէ անոնց ներքին ու խախտն արժեքը, պէտք է կրօնական դաստիարակութեան կարեւոր տեղը տանք մեր թաղային վարժարաններու ծրագրին մէջ : Թէեւ ցուալի, բայց բացարձակ իրողութիւն մըն



է այսօր որ մեր ազգային դպրոցները կրօնական դաստիարակութեամբ չեն օժտեր մատաղ սերունդը . ինչո՞ւ . վաճառ գի կրօնի ուսումը կ'աւանդուի շատ տարտամ ու խիստ անխնամ կերպով, կարծես թէ աւելորդ ու անպէտ տարր մ'ըլլար ան : Ստոյգ է որ թէև ըստ երեւոյթին ամէնէն բարձր տեղը կ'արուի դպրոցական ծրագիրներու մէջ կրօնի ուսման , ե քննութեանց ու պաշտօնական տոյժներու մէջ առաջնութիւն կ'ընծայուի անոր , ե սակայն իսկապէս չաւանդուի որ ան պատշաճ կերպով : Եթէ լրջօրէն նկատողութեան առնենք այդ տխուր իրողութիւնը , պիտի տեսնենք թէ պատճառը ուրիշ քան չէ բայց եթէ ձեռնհաս կրօնուսոյցներու եւ արժէքաւոր դասագրքերու զգալի պակասը , ու մանաւանդ ուսուցիչներու անտարբերութիւնը : Պոլսոյ ե գաւառներու թաղային վարժարաններու մէջ կրօնի ուսումը կ'աւանդեն յաճախ աշխարհիկ ա'յն պիտի ուսուցիչներ , որոնք յայտնի դժկամակութեամբ ու չկամութեամբ — բացառութիւնները յարգելով — միայն կ'կատարեն իրենց այդ պաշտօնը , որուն արդիւնքն անշուշտ վտանգաւոր կ'դառնայ մատչելի սերունդին : Իսկ , գալով դասագիրքերուն անյարմարութեան , թերեւս առարկուի թէ կան բազմաթիւ Բրիտանիկաններ , Հին Ուխտի , Նոր Ուխտի , եւն . բայց փութանք ըսել թէ անոնք ամենքն ալ անբաւական են իսկապէս մատաղ սերունդին կրօնաբարոյական կրթութեան : Բրիտանիկանները մանաւանդ իրենց չոր ու ցամաք հարց-պատասխաններով ու հակասական պարունակութեամբ անհուն նապէս հեռու են բաղձացուած արգասիքն ընծայելէ . որովհետեւ ուսանողը անտնայնով չկրնար որոշակի գաղափար մը կազմել քրիստոնէական կրօնի վարդապետութեանց ու հաւատալիքներու մասին : Կրկնենք թէ հայ հեղինակներու կողմէ հրատարակուած քրիստոնէականներու պարունակութիւններն բաղդատամբ իրարու ա'յնքան հակասական են որ Հայ-հռոմէական վարդապետ մը հրապարակաւ մատնանշած է զայն ժամանակին : Եւ արդէն եկեղեցա-

կան ու կրօնական ուսման համեօտ չըջան մը բոլորող ո'ւ է անհատ դիւրաւ կրնայ զգալ թէ Բրիտանիկաններէն դրական արդիւնք սպասել առնուազն անմատու թիւն է : Եւ երբ կրօնական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը կ'ուզեն մատնանիշ ընել , կ'ցաւիմ ըսելու թէ հոգեւոր իշխանութիւնն ալ զանցաւոր զբաւնւելով , չէ որոշած ուղղութիւն մը , որուն պարտաւոր ըլլան հետեւելու թաղային վարժարաններու կրօնուսոյցները : Եւ որովհետեւ ներկայ անտարբերութիւնը կրնայ համեմատաբար ածիլ ժամանակի ընթացքին մէջ , հետեւապէս հոգեւոր իշխանութեան նուիրական ու աւագ պարտականութիւնն է հոգածու գտնուիլ ազգային վարժարաններու կրօնական ոգւոյն ու բարոյական ուղղութեան : Ո՞րչափ աշխարհիկ ուսուցիչներ կան , որոնք յակամայ կ'աւանդեն կրօնի դասը յայտնի տրհամարհանքով ու ծիծաղելի խմտակուրութեամբ : Եւ երբ մէկը որ կ'աւանդէ դոս մը , որուն վրայ ինք համոզում չունի , ինչպէս կ'ուզենք որ արդիւնաւոր ըլլայ , ո՞չ ապաքէն նախ ինքը պէտք է համոզուած ըլլայ , որպէս զի կարենայ ազդել նաեւ ուսանողներու հոգեկան ու բարոյական վիճակին վրայ : Այս տեսակութեամբ ուրիշն կրնանք ըսել թէ մեր թաղային վարժարաններուն մէջ բառին բուն նշանակութեամբ կրօնական դաստիարակութիւն չի կայ , ե այս իսկ է գլխաւոր պատճառներէն մին որ ժողովուրդն ընդհանրապէս եւ նոր սերունդը մանաւորապէս ջերմ վերաբերում չունին կրօնական իրերու նկատմամբ , ե փոխանակ քրիստոնէական կրօնի կալուածին մէջ փնտռելու իր սիրտին ու հոգիին սիրտիանքը , կ'նետուի արտաքին աշխարհի զպայական հեշտութեանց մէջ :

Ինչո՞ւ կ'ըլլէ ուրիշն հոգեւոր իշխանութիւնը , ինչո՞ւ չի հսկեր իր իրաւասութեան ներքեւ գտնուած ազգային վարժարաններու կրօնաբարոյական ոգւոյն եւ ուղղութեան : Միթէ անոր պաշտօնը միմիայն կրօնական ու եկեղեցական ընթացիկ գործերու կարգադրութեան մէջ պէտք է սահմանափակուի , ո՞չ ապաքէն պա-



տասխանատուութեան ամէնէն մեծ բաժինն ունի ապագայ սերունդի կրօնական դաստիարակութեան կենսական ու անհրաժեշտ հարցին մէջ :

Եթէ եկեղեցական միութիւնը կ'փափաքի որ իր ձեռնարկը փայլուն յաջողութիւններով պսակուի, Տաճարի երեւումէն վերջ պէտք չէ ձեռնթափ ըլլայ, այլ ընդհակառակն պարբերաբար պէտք է նիստեր գումարէ ու խորհի եկեղեցական ու կրօնական կարևոր հարցերու վրայ, և ի հարկին մշակուած իզձեր ներկայացնէ հոգեւոր իշխանութեան, որ իր կարգին նկատողութեան առնելով զանոնք պատշաճ անօրէնութիւններն ընէ յօգուտ Եկեղեցիի և ի միջնորդութիւն հոգեւոր համայնքին :

Իսկ մենք առ այժմ կրօնական դաստիարակութեան անհրաժեշտ հանգամանքը չեղանկով ու ընդունելով զայն իբր հիմնա-

կան միջոցներէն մին արդի կրօնական անտարբերութիւնը վանելու, խոնարհաբար հոգեւոր իշխանութեան հաշտութեան կը յանձնենք մեր թաղային վարժարաններու կրօնական դաստիարակութեան տեսակէտով արդի աննախանձելի վիճակը, և կ'փափաքինք որ լրջօրէն նկատողութեան առնելով զայն, գոնէ ապագայ սերունդը փրկելու համար պարտաւորիչ դարձնէ կրօնական առողջ դաստիարակութիւնը, որոչէ մանկավարժական ու դիւրուսոց ուղղութիւն մը և իր հոգեւոր իրաւասութեան լիազօրութեամբ կարգէ հոգեւորական ձեռնհաս կրօնուսոյցներ, որոնք միայն կարենան աւանդել կրօնի ուսումը գիտակցութեամբ ու արդիւնաւորութեամբ, հետեւելով անշուշտ որոշեալ ուղղութեան :

ՊԱՐԳԵՒՆՆԱՅԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՆԱՐԵԿ-ԳԱՐԵՈՒ

## ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

Ա. — ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԸ. — (Ղուկ ԺԱ, 1-4 = Մժ. 2. 9-13):

Բ. — ՆՈՅՏԵՄԲԵՐ 22 Ի ԱՒԵՏԱՐԱՆԸ. — (Ղուկ. ԺԲ, 22-34 = Մժ. 19-21. — 25-34):

Գ. — ՆՈՅՏԵՄԲԵՐ 29 Ի ԱՒԵՏԱՐԱՆԸ. — (Ղուկ. ԺԳ, 1-9):

Ա. — ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԸ. — «Եւ եղև ի տեղոց ուրեմ կա յաղթա», բացատրութիւնը Ղուկ. ի մէջ տեղը և ժամանակը չորոչիք : Մտթ. ի մէջ Յիսուս ինքն է որ պէտք կը տեսնէ սորվեցնել, իսկ Ղուկ. ի բէջ աշակերտներէն մէկն է որ սորվիլ կ'ուզէ աղօթելու կերպը : Ղուկ. ի մէջ աղօթքը աւելի համառօտ ձև մ'ունի և հինգ խնդրութեան մէջ կ'ամփոփուի. մինչդեռ Մտթ. ի մէջ բերած աղօթքը եօթը խնդրութեան կը բաղկանայ : Ղուկ. ի մէջ կը պակսին երրորդ և եօթներորդ խնդրութեանը, որոնք սակայն ինչ ինչ օրինակներու մէջ կը տեսնուին. հաւանա-կան է որ այդ յաւելուածները վերջը կատարուած են Մտթ. ի աղօթքին վրայէն

ամբողջացնելով : Ասկէ զատ սա՛ ալ ճշմարիտ է որ երրորդ խնդրութեան արդէն երկրորդին մէջ կը բովանդակուի, ինչպէս նաեւ եօթներորդը վեցերորդին մէջ : Չորրորդը փոքրիկ տարբերութեամբ մը յիշատակուած է երկու աւետարաններու կողմէ : Մտթ. ի մէջ միայն ներկայի պէտքը կը չեշտուի. «տուր մեզ այսօր», ինչ որ առաւօտեան աղօթքի հանգամանքը կուտայ անոր. իսկ Ղուկ. ի մէջ ապառնիի կանխահոգութիւնն ալ կը տեսնուի. «օր-րասօրեմ» բացատրութեամբ : Ղուկ. ի մէջ Մտթ. ի «պարտիք» բառին տեղ գործածուած է «մեղք», բայց նախադասութեան վերջին խօսքը «որ պարտիցի մեզ»՝ պարտիցի և մեղքի միեւնոյն իմաստով կիրարկուած ըլլալը կը մասնանշէ :

Աղօթքը այն հրաշալի լեզուն է՝ որով մարդիկ կը խօսին իրենց Աստուծոյ հետ : Այդ լեզուն սակայն ձիւրն է անոնց միայն՝ որոնք իրենց հոգիին մէջ ունին այդ Աստուծոյ հանդէպ սիրոյ վառ բոց մը : Մե-



ուած են այն շրթները՝ որոնք երբեք չեն շարժած աղօթքի սրբանուէր միմուկն չեն երթով. վասն զի խօսքն է կենդանութեան նշանը: Անխօս մարդ մը կամ համր է կամ մեռած, և չաղօթող հոգի մը կամ թերահաւատ է կամ բարոյապէս մեռած:

Աղօթքը հոգիին ինքնաբերական մէկ թուիչքն է, դէպի խորհրդաւոր բարձրութիւնները սաւառնող: Իբր այս՝ կրօնքին էական մէկ մասը կը կազմէ այն. ասոր համար ալ ամէն կրօնքի պատկանող ժողովուրդ իրեն յատուկ աղօթելու եղանակն ունի: Բայց բոլոր աղօթքներուն մէջ գերազանցն ու անբաղդատելին է Յիսուսի մեղ կոտակածը, որ Տէրունական աղօթք անունով ծանօթ է: Ասոր մէջ կը խառնան քրիստոնեայ անհատի մը բոլոր պարտականութիւններն ու իրաւունքները:

Այս աղօթքին մէջ Աստուած յորջորջուած է Հայր, ցոյց տալու համար անոր նախախնական գուրգուրանքը բոլոր մարդոց վրայ՝ որոնք առանց խորութեան որդիական հաւատար իրաւունքներ կը վայելեն անկէ, ասոր համար է որ կ'ըսենք «Հայր մեր» և ոչ թէ «Հայր ին»: Այս աղօթքին մէջ կը հռչակուի նաեւ Աստուծոյ անհամեմատ բարձրութիւնը «որ յերկինս ես» բացատրութեամբ: Տէրունական այս չքնաղ աղօթքը կրնանք բաժնիկ երեք մասերու:

Ա. — Մաղթողական. — որով փափաք կը յայտնենք որ մեր երկնաւոր Հօր անունը սուրբ մնայ՝ սուրբ պահելով մեր կեանքը. անոր թագաւորութիւնը տիրէ բովանդակ տիեզերքին վրայ՝ աւետարանի լոյսը ճառագայթեցնելով մարդոց սրտերուն մէջ, և անոր բացարձակ կամքին հնազանդին մարդիկ՝ սիրայօժար և պատրաստակամ հոգիով մը, որպէս զի Աստուծային կամք և մարդկային կամք համաձայն ըլլան իրարու:

Բ. — Խնդրողական, — որով մեր հոգեւոր և նիւթական ամէնօրեայ անհրաժեշտ սրնունքը, և մեր ընկերոջ յանցանքը ներելու պարտականութիւնն իս ճանչնալով՝ մե՛ր ալ մեղքերուն ներուածը կը խնդրենք, աղաչելով միայնգամայն որ զմեզ փորձութիւններէ և մեղքի առթիւներէ զերծ պահէ

իր հայրական գորովովն ու հոգատարութեամբը:

Գ. — Խոտոխնայական կամ փառաբանական, — որով կ'ընդունինք և կը զաւանինք թէ մեր Աստուծո՛յն է միայն յաւիտեանական թագաւորութիւնը, գորութիւնը և փառքը:

Աղօթքին զօրութիւնը և արդիւնաւորումը աղօթողին արամադրութենէն կախում ունի բացարձակապէս: Դարձեալ առանց գործի աղօթքը կ'ենթադրէ կորուստութիւն հոգի մը՝ որ ոչինչ կրնայ շահիլ: Պէտք է զգուշանալ «Հայր մեր» ի թուեալաբար, սովորամոլ և անգիտակից արտասանութենէն՝ որ աւելի դատապարտութիւն կը հրաւիրէ մարդու վրայ՝ քան թէ կը վարձատրէ զայն: Այսպէս են նաեւ եւսասիրական զգացումի և անձնական շահալիտումի արդիւնք եղող բոլոր աղօթքները՝ զորս Յիսուս ինք իսկ դատապարտեց:

Բ. — Աւետարային հոգ. — Աւետարանի աշակերտը պէտք չէ հոգ ընէ իր նոզիկն, այսինքն իր նիւթական կեանքին համար թէ ի՞նչպէս պիտի կրնայ պահել զայն և ո՛չ ալ մարմնին համար թէ ի՞նչ կերպով պիտի պահպանէ զայն արտաքին վտանգներէ:

Այս ըսել չէ թէ Յիսուս կը դատապարտէ կանխահոգութիւնը, այլ կ'ուզէ իմացնել թէ կեանքը կերակուրէն աւելի կ'արժէ և մարմինը զգեստէն. հետեւաբար երբ կարեւորագոյնները տուած է Աստուծո՛ւ ըրնաւորագոյնները տուած է Աստուծո՛ւ՝ ըրնաւորագոյն նուազ կարեւորներն ալ աչքէ չվրիպեցնելու: Կեանքն ու մարմինը պարզեւորդ՝ հարկաւ զանոնք պահպանող միջոցներուն վրայ ալ կանխաւ խորհած է. բուսական է որ մարդը իր անձնական աշխատութեամբ ինքզինքը արժանի հանդիսացընէ այդ գերագոյն խնամքին: Նիւթական կեանքի պահպանութիւնը նախախնամութեան գործ է՝ եթէ մարդը զիստայ տիեզերական օրէնքին դէմ չմեղանչել. ասոր ապացոյց է ազնուներու (ըստ Մով. ի «Թռչունք երկնից») անջան կերակուրիլը: Մարդիկ ա՛լ աւելի նախախնամութեան առարկայ են, վասն զի աւելի կ'արժեն «քան զթռչունս»: Մարդիկ առանց Աստուծոյ կամքին, այսինքն առանց անոր



տիւղեքական կամքին համաձայն կեանք վարելու, բան մը չեն կրնար աւելցնել իրենց ունեցածին վրայ. արդ՝ պղտիկ բաներու մէջ անկարող ըլլալով՝ մեծամեծներու, այսինքն կարողութենէ վեր բաներու հոգ ընելը՝ անմոռ ութիւն է: Աստուծոյ նախախնամութեան մեծութեան իբրեւ ապացոյց մէջ կը բերուի դաշտի շուշանը՝ որ կ'աճի անջան և առանց մանկու, և կը հետեւնէ թէ մարդը դաշտի խոտէն անհամեմատօրէն արժէքաւոր ըլլալով՝ աւելի աւարկայ է Աստուծոյ գուրգուրալի որդեման: Ազաւաի օրինակով՝ կերակուրի և շուշանի օրինակով՝ զգեստի հոգ ընելուն անտեղութիւնը ցոյց կուտայ: Փնտուկ և վարանիլ թէ ի՞նչ պէտք է ուտել և խմել՝ հեթանոսութեան յատուկ ընթացք է. ասոնք այնպիսի պէտքեր են՝ զորս Հայրը զիտէ արդէն և որոնք ինքնաբերաբար զոհացում կը գտնեն՝ երբ մարդիկ էականին և կենսականին համար գիտեն աշխատիլ: Իրիստոնէին պարտականութիւնն է ամէն բանէ առաջ խնդրել Աստուծոյ քաղաքաբնակն, այսինքն ջանալ սրբութեամբ և արդարութեամբ արժանաւոր բնակարանները դառնալ Աստուծոյ և անոր արդարութիւնը, այսինքն մեր ընթացքը ըստ ամենայնի հաշտեցնելով աստուածային օրէնքներուն և պատուէրներուն՝ անոր բարեացակամ վերաբերումին արժանանալ:

Աստուծոյ թագաւորութիւնն ու արդարութիւնը պատաստ են և կ'իրագործուին միայն անոնց համար՝ որոնց ամէն մէկ գործառնութեան մէջ արդարութիւնը իրապէս կը թագաւորէ: Մարդկային արդարութիւնն է որ կը շահի աստուածային արդարութիւնը, և Աստուծոյ թագաւորութիւնը պայծառ ու հանգարտ գիտակցութեան մէջն իսկ է՝ որ չմոռնիր բնաւ:

Գ. — Ապաւսարուքեան կոչը. — Պատմութիւնը որ և է տեղեկութիւն չհաղորդել մեզ Դուկ. Ի Ժ Գ. 1-9 ի մէջ պատմած պաշտի դէպքի մասին: Շատ հաւանական է որ այս իրողութիւնը Յիսուսի պատմողներն էին հրեաներու այն դասակարգէն՝ որ մասնաւոր հակակրօնութիւն մը

կը անուցանէր Գալիլիացոց դէմ և Պիլատոսի յոյժ հակամարդկային գործին մէջ աստուածային պատուհասի մը նշանը կը տեսնէր: Յիսուս ցրելու համար անոնց այս թիւը ըմբռնումը և ցոյց տալու համար թէ իրենք ալ լաւ չէին քան այն դժբախտ արկածեալները՝ իրենց ալ յաւիտենական կորուստի մատնուելը կը յայտարարէ եթէ չապաշխարեն: Բնական պատուհանները աստուածային կամքի մը և տնօրէնութեան արդիւնք նկատել, ինչ որ ամէն դարու մէջ ժողովուրդին ռամիկ դասակարգին ըմբռնումը եղած է միշտ, ուղիղ չէ ամեն պարագայի մէջ: Ով որ զանցառու կը գտնուի օրէնքին հանդէպ, ըլլայ այն աստուածային կամ մարդկային, անխուսափելիօրէն պիտի կրէ այդ չեղումի կամ զեղծումի՝ գիտակից թէ անգիտակից՝ վնասը կամ չարիքը: Աղէտները յաճախ ալ մեր անհեռատեսութեան և անշնչահայեցութեան արդիւնքն են: Յիսուս զայս կը հաստատէ իր իսկ խօսքերով. «համարի՛ք եթէ այն Գալիլիացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլիացիս, զի զայնպիսի սնցս կրեցին: Ո՛չ, ասեմ ձեզ. այլ եթե ոչ ապաշխարիցե՛ք ամենեկին նոյնպէս կորնչիցիք»:

Սկիզբով աշտարակին դէպքն ալ այլուր յիշատակուած չենք գտներ: Հաւանաբար աշտարակը կը գտնուէր Սկիզբով աւազանին մօտերը, ուր հաւաքուող ախտաժէտներու թուէն էին թերեւս «ուրեմաւանքն՝ յորոց վերայ աշտարակն անկաւ»:

«Ամենեքեան նոյնպէս կորնչի՛ք» . այս ինքն ոչ թէ այն եղանակով՝ որով անոնք կորսուեցան, այլ այն պատճառով՝ որով անոնք սպաննուեցան. վասն զի եթէ մեղքն էր — օրէնքի և պատուէրի զանցառութիւնը — անոնց կորուստին պատճառը, նոյն այն մեղքը պիտի ըլլար նաեւ իրենց ալ կորուստին շարժառիթ՝ եթէ չապաշխարէին:

Այս հաստատմին հետ սերտ կապ ունի թղենիին առակը: Թուզը, ինչպէս նաեւ խաղողը, խորհրդանշաններն են Իսրայէլի ժողովուրդին (Երեմ. Ի Գ. 2-10. — Ով. Թ. 10): Հոս յիշուած է նաեւ այդին՝ ուր տնկուած է թղենին: Աւելի բանաւոր է ասո-



կայն հոս այգին նկատուի խորհրդանշանը Իսրայէլի ժողովուրդին և թղկին՝ իւրաքանչիւր իսրայէլացիի: Այդին աէրը Աստուած է և այգեգործը՝ Յիսուս, որ գուրգուրալի խնամք մը կը տածէ անոր նըկատմամբ: Երեք թիւը որ և է խորհրդանշանական իմաստ չունի, այլ, ինչպէս ալլուր՝ հոս ալ իբրեւ բոլորակ թիւ մը գործածուած է. թէև՝ միւս կողմէ՝ թղկինն ընդհանրապէս երեք սարուան մէջ պտուղ կուտայ:

Անպտուղ ծառի մը գոյութիւնը ոչ միայն անօգուտ է, այլ նաև վնասակար այն երկրին՝ որուն պտղաբերութեան արգելք կ'ըլլայ իր երկարածգած շուքով: Այսպէս մեղաւորը, բարոյապէս ինկածը աղետաբեր տարր մը կ'ըլլայ իր գոյութեամբը այն ընկերութեան՝ որուն մէջ կը գտնուի և որով կ'ապրի: Ծառին շուքը բրելու և աղբելու հոգը ապաշխարութեան կոչն է, որուն պտուղը պէտք է ըլլայ զղջումը, առանց որուն փրկութիւնը անհնար է: Այս առակով Յիսուս ուզեց հասկնել հրեաներուն թէ վերոյիշեալ արկածեալներուն չափ իրենք ալ մեղաւորներ են, բայց աստուածային երկայնամտութիւնը ժամանակ ստեղծ է իրենց ապաշխարելու և կորուստէ վերք մնալու համար:

#### ՄԵԿԵՆԻՉ

Ստեղծ կ'արտայայտուի մեր մեկնութեան առաջին հատուածին հետ կապ ունեցող «Աղթք» Գ. Օսեանի: Նոյն

\*\*\*

#### ԱՂՕԹՔԸ

Սիրելի եղբայրս, աշխարհի վրայ մարդիկ կան որ կը հաւատան, մարդիկ կան որ չեն հաւատար, ես անոնցմէ եմ որ կը հաւատամ: Հիմա՞ միայն կը հաւատամ և միթէ այսօր սկսայ ազօթել: Կրնամ ըսել թէ կեանքիս մէջ օր մը չէ եղած որ չազօթեմ:

Ազօթէ՛ ստեղծողիդ, և դատաւորիդ առջեւ սիւնէ՛ խոստովանութիւններդ ու զղջումներդ. ես այս ձայնը միշտ լսած եմ իմ ներսիդին և զօրաւորագոյն հնչած է յիս ամէն անգամ որ այնպիսի գործ մը կատարելու վրայ եղած եմ որ ծանր հե-

տեանք պիտի ունենար կեանքիս մէջ: Աւա՛ղ, ոչ միշտ հնազանդած եմ այս ձայնին, և աղէտներս միշտ այսպիսի անհնազանդութենէ յառաջ եկած են: Մարդիկ կան որ կը խեղդեն այս ձայնը իրենց սրտին մէջ կամ կը զօսացնեն իրենց ականջն ու սիրտը այս ձայնին դէմ: Ես ոչ երբեք խեղդած եմ զայն, աստուածային արդարութեան և գթութեան առջեւ այս միայն իրաւունքս մնացած է: Մարդս որ այս աշխարհը կը թաւալէ և կենաց պայքարը կը մղէ, պիտի տեսնէ պայծառ ու զուարթ օրեր, այլ և շատ անգամ անձրևոտ օրեր, հողմունք և փոթորիկ պիտի փչեն և կայծակ պիտի գայ, և սլաքներ պիտի սուրան չորս կողմը ու երբեմն երբեմն ալ պիտի հարուածեն զինքը: Այս բաժին է ամէն մարդու որ կ'ապրի: Այլ այն մարդը որ միշտ լսած է իր ներսիդին Աստուծոյ ձայնը և այն ձայնին միշտ հնազանդած, նա կը վայելէ ներքին երանութիւն մը, որուն չին համար ու չեն ազդեր փոթորիկներն ու սլաքներ, նա կը վայելէ խղճմտանքի զուարթութիւնը զոր ոչ ոք կրնայ կապուի իրմէ:

Այսպէս էր մեր հայրը, սիրելի եղբայր, դուք գիտէք և կը վկայէք զայս, բոլոր եղբարք իմ և քորք: Այլ մենք շատ խիստ լսեցինք ուրիշ տեսակ ձայներու և անտի՛ աղմուկ մեր սրտին մէջ: Ու դժբախտութեանց մէջ չունեցանք այն նուրբ և կամաւոր համբերութիւնը զոր ունէր մեր հայրը: Կեանքին նիւթական վայելքներուն մէջ, որ միմիայն յոգնութիւն ու զղումնք կը բերեն, փնտռեցինք այն ճշմարիտ վայելքները, զոր միմիայն բարոյական կեանքը կուտայ:

Ինչո՞ւ կը զարմանաս ուր կ'ազօթեմ ինչ բան աւելի մեծ է քան ազօթելն Աստուծոյ. և երբ ես այս կարողութիւնը կ'զգամ յիս, խիստ քիչ է որ կ'ազօթեմ երբեմն կամ օրը ժամ մը կամ երկու ժամ. ես՝ ոչինչա՞ կը բարձրանամ առ այն որ ամենայն ինչ է, և անոր, գերագոյն էակին ոտքը կը սիւնեմ իմ զղջումներս և խոստովանութիւններս, անոր արդարութիւնը և գթութիւնը կը հալցեմ ինձ համար և ձեզի



համար, ինչ աւելի մեծ մխիթարութիւն  
և ո՞ր զօրութիւն աւելի մեծ է՝ երբ մարդ  
վիշտեր ունենայ, երբ աղէտից հանդիպի,  
երբ խեղճութիւն տեսնայ, կարենայ առ  
Աստուած համբաւունալ:

Ու մարդն այնքան վաանգներով չբը-  
ջարատեալ է, այնքան թշնամիներ ունի,  
և իր է՛ն մեծ թշնամին ինքն է, իր տկա-  
րութիւնները, իր մոլութիւնները: Ինչա-  
քէն ետքը ո՞վ պիտի կանգնէ զինքը, եթէ  
ոչ աղօթքը:

Ուրեմն աղօթեմ, աղօթէ՛ դու ալ, սի-  
րելի՛ եղբայրս: Մեր հայրը մեզի սուրբ և  
անկապտելի ժառանգութիւն մը թողուց,  
հաւաստքն ու բարեպաշտութիւնը, աղօթ-  
քը: Կը յիշե՞ս այն ժամանակները որ բոլոր  
ընտանեօք կ'աղօթէինք իրիկունները: Ու-  
րիշ ինչ ժառանգութիւն թողած ըլլար՝  
մինչև հիմա վստահած էինք, այս ժառան-  
գութիւնը թէեւ վստահի, այլ նորէն կ'ըս-  
տացուի:

Գ. ՕՏԵԱՆ

## Ս. ԳՐԱԿԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

### Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԲՈՅՍԵՐԸ

ՆՇԵՆԻ. — (Եբեմ. Ա. 11. 12). Եբր, շաֆեհ  
(= shaken). Յուն. ἀμύγδαλον (= ամիգսա-  
լոն). Բ. Բ. Amygdalus communis (= հա-  
սարակ Նեեմի).

Եբր. շաֆեհ (= Նշենի) բառը նման շատ  
մը ծառերու անուններուն, կ'գործածուի  
թէ ծառին՝ նշենիին, և թէ պտուղին՝ նու-  
չին համար: Այսպէս բնագրին շաֆեհ բառը  
իրբ ծառին անունը գործածուած է Եկ.  
ԺԲ. 5 և Եբեմ. Ա. 11 համարներուն մէջ.  
մինչդեռ նոյն բառը իբր պտուղին անունը  
գործածուած է Մինդ. ԽԳ. 11, Եկից.  
ԻԵ. 33, 34, ԺԲ. ԺԷ. 8 համարներուն  
մէջ: Արարացիք նշենիին կըսեն «Լառզ».  
ճիշդ մերձաւորաբար այս բառին — «Լազ»  
— կ'հանդիպինք Մինդ. Լ. 37 համարին  
Եբրայական բնագրին մէջ: Եբր. «Լազ» ը  
կրնայ համեմատուիլ Աբար. «Լառզ» ին  
հետ. նոյն արմատէն են: Եբր. «Լառզ» ը  
սխալ թարգմանութեամբ ընկալի թարգ-  
մանուած է մեր գրաբարու Աստուածաշուն-  
չին մէջ: Ամենայն հաւանականութեամբ  
Եբր. «Լազ» ը և Աբարական «Լառզ» նոյն  
ծառին և նոյն պտուղին անուններն են:

Կ'երեւի թէ Եբրայեցւոց մէջ նշենի նշա-  
նակող երկու բառեր կային. մին Լազ և  
միւսը Շաֆեհ: Լազ ը աւելի հնագոյն գոր-  
ծածուած բառն է, մինչդեռ Շաֆեհը աւելի  
վերջէն գործածուած է:

Պաղէստինի և Սուրիոյ մէջ զանազան  
սեռակ Նշենիներ կան. 1. Amygdalus com-  
munis, 2. Amygdalus Orientalis, 3. Amyg-  
dalus spartioides.

Հաասրակ Նշին կամ Նշենի [amygdalus  
communis] միջակ ծառ մըն է. տերեւնե-  
րէն առաջ ծաղիկ կ'բուսնայ. ճերմակ և գե-  
ղեցիկ ծաղիկներուն արտաքին կողմը կար-  
միր կ'զարնէ: Մեծաւ մասամբ զոյգ զոյգ  
կ'ըլլան: Զմրան չըջանին՝ Յունուսար ամ-  
սոյն, Պաղեստինի մէջ արդէն բոլոր նշե-  
նիներն ծաղկած են սպիտակ ծաղիկներով.  
Երբ ծաղիկները կ'թափին, նշենիին շուրջ,  
գետինը կ'ծածկուի ճիւղաւաղիտակ սաւանի  
պէս ծաղիկներուն թերթիկներով: Հաղիւ  
ծաղիկները կը թափին և ահա տերեւները  
ընդ փոյթ կ'սկսին երեւիլ, և ծառը ար-  
դէն Փետրուարին կանաչութեամբ ծած-  
կուած է. տերեւները նշարակաձեւ և կոթա-  
ւոր են. նորածիլ կորիզաւոր պտուղը սը-  
րածայր ձուաձեւ է և մտուա հիւլեղ կա-  
նաչ արտաքին պատեան մ'ունի. այս  
պատեանը Աբարացիք կ'կոչին «Բուր-առու-  
կի-շառզ»: Նուշին կանաչ պատեանը վա-



րունդի թթուշախ համեղութիւնն ունի և ակորոժով կ'ուտուի . Պաղեստինի փողոցներու երկայնքը տեսնելու բան է սողայոց հաճոյքը երբ ծառերու վրայ ակորոժով կ'ուտեն նուշը :

Երբ նուշին կանաչ պատեանք կը չորնայ և միջուկը կ'հասունանայ՝ հետզհետէ չորցած պատեանին և միջուկին մէջ կը կազմուի ծակոտկէն կարծր և դւարաբեկ պատեան մը . այս նոր պատեանը միջուկին , այսինքն բուն համեղաճաշակ պտուղին ծածկարտանքն է :

Քաղցր և դառն նշենիններ կան . վերոնշանակեալ նշենիններէն ոմանք քաղցր և ոմանք դառն են . քաղցր նշին ոչ միայն կ'ուտուի , այլ և սերմերէն տեսալի մը իւզ կ'հանուի և շաքարախառն ըմպելի մը կը պատրաստուի ( = նշօշարակ ) : Դառն նուշը ճզմելով տեսակ մը իւզ կ'ելնէ և այս նուշը աւելի բժշկականութեան մէջ կը դործածուի : Նուշը արեւելքցիներուն սիրական համեղաճաշակ պտուղն եղած է սկիզբէն . պատուել ու յարգել կ'նշանակէր երբ համեղ պտուղներու հետ նուշ կ'ընծայուէր մէկու մը (Ծննդ . ԽԳ . 11) :

Երբ շաֆէս բառը կ'նշանակէ «պահպանել» և «արտօրալ» : Երեմիայի Ա . 11 համարին բնագրին «շաքէտ»ը կ'թարգմանուի «նշենի» , իսկ յաջորդ համարին մէջ յիշուած «շօքէտ»ը կ'թարգմանուի «պիսի հակել» , կամ «պիսի արտօրալ» : Երբայեցեոց մէջ նշենին նշանակ էր սաստուածային խոստումներու , «պահպանութեան» և նաեւ բոյսերու ամենէն կանուխ ծաղկողն ըլլալուն նշանակ եղած է «արտօրալու» :

Նշենին նմանութեան կ'ըբերուի ալեւորեալ մարդուն , թէ ծաղիկներուն ձիւնային սպիտակութեան և թէ ծառին ձմեռը ծաղկելուն համար (Ժող . ԺԲ . 5) :

ՏՈՍԱԽ. — (Նս . ԽԱ . 19, Կ . 13). Եբր . Թեաշշուր [= Tēashshūr]. Յուն . Բի'ֆուս (= πύθος). Բ . Բ . Buxus longifolia, Տափ . Երեւելի արաբ .

Մշսադադար տասալը [= Buxus sempervirens] խիտ թուփ մըն է . տերեւները պիղկ , փայլուն և մշտականաչ են . մանր գեղնադոյն ձերմակ ծաղիկները տերեւան-

կիւններու քովերը խումբ խումբ կ'բուսնին :

Պարտէզներու և գերեզմանոցներու մէջ շատ կ'տնկուի և միշտ կարելով ու քշտելով կարճաբերձ կ'մնայ :

Պաղեստինի մէջ աճող տոսալը մեր տեսած տոսալներուն նմանն է , բայց աւելի միշե քան սաք բարձր կըլլայ . կ'աճի Լիւբանանու լեռանց վրայ ինչպէս և Գալիլիոյ բլուրներուն վրայ և ծանօթ է բուսաբանութեան մէջ Buxus longifolia անուամբ : Այս թուփին գեղին փայտը սառսիկ կարծր ըլլալուն՝ Պաղեստինի արհեստաւորները սանարեր և դգալներ կ'շինեն , ինչպէս նաեւ երաժշտական սրինգներ : Ս . Գրոց մէջ կը կարգանք որ Տիւրոսի նաւերուն նստաբաններն կամ տախտակամածներն փղոսկրով պատած տոսալէ չինուած էին (Եզեկ . ԻԷ . 6) :

Մեկնաբաններէն ոմանք Ս . Գրոց երբ բնագրին «թեաշշուր» բառը փոխանակ «Տոսախ» թարգմանելու , «Գիիի» [= juniperus phoenicea] կը թարգմանեն . (Տե'ս ի կարգին Գիիի բառը) :

Իսկ այլք կառարկեն թէ Եբր . «թէաշշուր» բառը չէ կարելի թարգմանել ո'չ «Տոսախ» և ո'չ «Գիիի» . վասն զի կրնեն Եսայիի ԽԱ . 19 . Կ . 13 և Եզեկիէլի ԻԷ . 6 համարներուն մէջ կ'յիշատակուի այնպիսի հսկայ և բարձրաբերձ ծառեր որոց քով չյարմարիր «Տոսախ»ը կամ «Գիիին» որոնք առ առաւելն թուփ մըն են : Վերոնշանակեալ համարներուն մէջ յիշատակուած եղևինը , սառսիկ , մայրին , սոսին , այս հսկայ և բարձրաբերձ ծառերը մասնաւորաբար յիշատակուած են Աստուծոյ վեհափառութիւնը , սիեղերականութիւնը և յողթութիւնը նշանակելու և շեշտելու համար . անիմաստ պիտի ըլլար այս ծառերուն քով (Մրեմիին ալ դուրս հանելով) թուփ մը յիշատակել որպէս է «Տոսախ»ը կամ «Գիիին» : Հետեւաբար Եբր . «թէաշշուր» ծառը պէտք է տոսալէն կամ գիիիէն տարբեր ծառ մը ըլլայ . դժբախտաբար ստուգաբանութիւնն ալ այս մասին լուսաբանութիւն մը չբերեր . Արարականին մէջ ալ չէ պահուած «թէաշշուր» բառէն



փոխառեալ ձև մը որ կարենայինք լուսաբանուիլ: Հին Արաբական թարգմանութեան մէջ կ'թարգմանուի «շերպին» որ «նոճի» ին [= cypressus sempervirens] վայրի տեսակն է. սաիկա հսկայ և ուղիղ ծառ մընէ և համաձայն է յարմարութեամբ վերը յիշատակուած ծառերուն կարգը գրուելու: Բայց ամէն պարագայի մէջ գրական եզրակացութեան մը գալ առ այժմ անյուսալի է. լաւ է որ Երբ. «թէաշշուր» բառը տառականօրէն թարգմանուի քանի որ անծանօթ կ'մնայ այդ ակնարկուած ծառը. ինչպէս որ տառականօրէն թարգմանուած է Ս. Գրոց բուսաբանութեան մէջ Երբայական «Ալկուս» կամ «Ալմուկ» ծառը (Տե՛ս ի կարգին «Ալկուս» բառը):

ԱՂԲ ԱՂԱԽՆԻՈՅ. — (Դ. քաղ. 2. 25). Երբ. Խա՛րի - Եօնիւ. Յուն. Բոբրոս բերիսթրոն (= χότρος περιστέρων):

Այս բառը Ս. Գրոց մէջ մի անգամ միայն գործածուած է: Երբայեցեբէն խա՛րի տառականապէս կը նշանակէ «աղանի»: Արաբերէնն ալ ունի նոյն բառը խերի [= heri] նոյն նշանակութեամբ. դիտուած է որ Արաբիոյ մէջ կայ նաեւ տունկ մը փսնտի նման որ նոյն խերի [= heri] անունը ունի: Ըստ այսմ մեկնիչներէն ոմանք «աղբ աղանուոյ» բառով կուզեն հասկնալ փսնտի կամ ռապի գոյնն ու ձեւն ունեցող բոյսը: Այլք կը խորհին որ «աղբ աղանուոյ»ն ոչ թէ տունկի մը, այլ նոյնիսկ աղանիի աղբն է: Հետեւաբար Դ. Թաղ. 2. 25 համարին մէջ յիշատակուած «աղբ աղանուոյ»ն աղանիի աղբի նշանակութեամբ առնելով կըսեն թէ «Սամարիոյ պաշարման ատեն մեծ սով ըլլալով իշուն գլուխը ութսուն սիկղ արծաթի և աղանիի աղբն ալ հինգ սիկղ արծաթի ծախուեցաւ»:

Պիտի առարկուի թէ միթէ աղանիի աղբը կրնայ ուտուիլ. սաիկա անկարելի բան չէ. օրինակներ չստ կան. կ'պատմուի թէ մարդիկ սովի ատեն ստիպուած են ուտել չուն, մուկ և ճնճղուկի աղբ, ինչպէս Հռիփթօն, Սպանիացի հեղինակէ մը վկայութիւն բերելով, կրտէ, թէ 1316 ին Անգղիոյ մէջ սով սիրած ըլլալով ժողովուրդը ըս-

տիպուեցաւ չուն, մուկ, ճնճղուկի աղբ ուտել: Այս պարագան բաղդատէ՝ Ռափսաքի սպանալիքներուն հետ (Դ. Թաղ. ԺԲ. 27. Եսայ. ԼԶ. 12)

Եթէ վերոնշանակեալ համարին մէջ (Դ. Թաղ. 2. 25) յիշուած աղանիի աղբը ընդունինք՝ թէ տունկի մը պտուղը կամ հունան է, պէտք է նոյնայնիւ Արաբիոյ ծանօթ խերի կոչուած սիսնտի նման տունկին հետ, որուն հունար սիրտ խառնող յատկութիւն ունի:

ՎԱՐՈՒՆԴ. — (Թիւ ԺԱ. 5) Երբ. (1) Բիշշիւն (Kisshuim) Յուն. Սիֆիի (σικύσι) բ. բ. cucumio salivus (հասարակ վարունգ):

(Եսայ. Ա. 8) Երբ. (2) Միքշահ (Mikshah) Յուն. (σικυράτον) (սիֆիի'նաթօն) բ. բ. cucimio chat (Տանիկ վարունգ):

Վարունգը Արեւելքի մէջ գրեթէ ամէն կողմ կ'մշակուի իբր Խալիֆայի սրող յարմար ուտելիքի տարր մը. Պաղեստինի մէջ սովորական են երկու տեսակները, 1. cucumis sativus (հասարակ վարունգ) և 2. cucumis chat (Տանիկ վարունգ):

Առաջինը՝ հասարակ վարունգը, արաբացիք կ'անուանեն «խիշար», որ համեղ ճաշակ մ'ունի և աւելի առողջարար է քան եւրոպական միւս տեսակները: Երկրորդը՝ Տանիկ վարունգը ծանօթ է արաբացւոյ մէջ Բիքքա՛ կամ Միքթի՛ անուամբ որ Երբայական Բիշշա (cucumis chat) բառին փոփոխեալ ձեւն է. այս վարունգը Եգիպտոսի արտադրութիւններէն մին կը կաղմէր (Թիւ ԺԱ. 5)՝ աւելի երկար և նուրբ է «հասարակ վարունգը». մէկ ոտք երկայնութեամբ և մէկ մատնաչափ հաստութեամբ ըլլալով՝ երկու ծայրերն ալ սրածայր են: «Հասարակ վարունգէն» (խիշար) նուազ ջրուտ, հիւթեղ միւս մ'ունի. թէպէտեւ աւելի համեղ ճաշակ: Մագամբ Եգիպտական է և այժմ Արեւելքի ամէն կողմերը կը մշակուի. աւելի յարգի է քան «հասարակ վարունգը» և միանգամայն աժան կը ծախուի:

«Հասարակ վարունգ» ին և «տանիկ վարունգ» ին տարբերութիւնը գլխաւորաբար կ'կայանայ սա պարագային մէջ որ առա-



ջինը առանց մասնաւոր, չարունակական ուղղութիւն կամ ջրումի չկրնար մշակուիլ, մինչդեռ «տաճիկ վարունգ»ը (արաբ. *խրթան*) կրնայ ածիլ կատարելապէս անջրդի չոր ու ցամաք հողի վրայ առանց կաթիլ մը ջուրի, ամբարն օթթազին օրերէն սկսեալ մինչեւ վերջ. թէև եթէ ջրաբեր հողի վրայ մշակուի աւելի խոշոր մեծութիւն կ'ունենայ: Խիշար արաբական բառը կը կարծուի թէ պարսկական բառէ փոխառեալ է:

**ԲԱԼԱՍԱՆ.** — Ս. Գրոց Հայերէնին մէջ թարգմանուած է ԴԵՂ, ՌԵՏԻՆ (Երեմ. Ը. 22). Երբ. Յօրի (Tzori) Յուճ. *Բիթինի* (ֆոֆ. բ. բ. *Balsamodendron gileadense*).

Ս. Գրքի Եբրայական բնագրին մէջ յիշատակուած «Յօրի» բառին նշանակութիւնը գրեթէ անկարելի եղած է հասկնալ բանասիրական տեսակէտով. ասոր համար հին թարգմանութիւնները այս «Յօրի» բառին նշանակութեան վրայ չեն համաձայնած և միշտ բառը իր իմաստին մէջ անստույգ մնացած է: Այն համեմունքը որոնց մէջ յիշատակուած է այս «Յօրի»ն (Ծննդ. Լէ. 25. Բաղտ ԽԳ. 11) ենթադրել կուտան թէ այս բառը կ'ակնարկէ ինկառնոտ ու անուշաբույր խէժի մը կամ համեմի մը: Երեմիայի Ը. 22, ԽԶ. 11. ԺԱ. 8 համարներէն ալ կ'հետեցուի թէ այդ ինկառնոտ խէժը բժշկական յատկութիւն մըն ալ ունէր:

Այս խէժին կամ համեմին համար Գաղատի մէջ մեծ վաճառականութիւն կըլլար. նաեւ Յուդայի և Իսրայէլի երկիրներուն մէջ (Եզեկ. Իէ. 17) ասոր առուտուրը կըլլար: Սխալ է կարծել որ այս ինկառնոտ համեմը կամ բաղասանը Գաղատի մէջ կ'աճէր: Ս. Գրքի յետագայ հասուածներէն — «Միթէ Գաղատի մէջ բաղասան չիկայ», «Գաղատա ելիք ու բաղասան առ», «Յուդա և Իսրայէլի երկիրը քու վաճառականներդ էին, բաղասանի առուտուր կ'ընէին» — չէ կարելի հետեցնել թէ բաղասանը այդ տեղերուն, Գաղատի, Յուդայի և Իսրայէլի երկիրներուն արտադրութիւնը ըլլայ:

Գաղատի աշխարհագրական վայրը ա-

նորոշ կը մնայ. հաւանականաբար այն ընդարձակ տարածութիւնն է որ կ'ընդլայնի Յորդանանէն մինչեւ Եփրատ և կ'երկարի Յորդանանէն մինչեւ Արաբիոյ անապատային վայրերը: Այս երկրէն կ'անցնէին Արաբիոյ վաճառականներն ինչպէս նաեւ Իսմայէլացի վաճառականները և իրենց գլխաւոր վաճառքները կ'կազմէին համեմներ, բաղասաններ և խուսկեր: Ամէն պարագայի մէջ Գաղատաւոր չկրնար նկատուիլ բաղասանի արտադրութեան վայրը, այլ միայն կրնայ նկատուիլ բաղասանի մթերանոց կամ վաճառականութեան կեդրոն:

Մեկնաբաններէն ոմանք կ'ենթադրեն որ Երբ. «Յօրի»ն Մագսաֆէն (մասթիքա) եղած ըլլայ. բայց այն ծառը ուրկէ վագսաֆէն կ'ենէ, Յորդանանու արեւմտեան կողմը միայն կը գտնուի, մինչդեռ Յորդանանու Արեւելեան կողմը երբեք չգտնուիր. եթէ Երբ. «Յօրի»ն «մազտաքէն» է, պէտք էր որ Յորդանանու Արեւելեան կողմը Գաղատի և Բառանու անտառներուն մէջ գտնուէր, ինչ որ չիկայ երբեք: «Յօրի»ն «մազտաքէն» եղած չկրնար ըլլալ, վասն զի ո'չ Գաղատի և ո'չ Արաբիոյ մէջ չգտնուիր. և քանի որ չգտնուիր այդ կողմանց վրայ, հետեւաբար և վաճառականներ ալ այդ տեսակ համեմ մը չէ կարելի ենթադրել որ կրնային Գաղատա տէն անցնելով դէպի Եգիպտոս տանիլ: «Մազտաքէն» միշտ եղած է առաջնակարգ և գլխաւոր արտադրութիւն Քիոսի և Արշիպեղազոսի միւս կողմանց և ապահովաբար Արաբական արտադրութիւն մը չէր կրնար ըլլալ:

Այլ կ'ենթադրեն որ Երբ. «Յօրի»ն Մեֆեի թաղաւանը եղած ըլլայ որ արտադրութիւնն է *balsamodendron gileadense* և *balsamodendron opobalsamum*: Աւանդութիւնն ալ այս ենթադրութեան կ'նպաստէ: Յովսէպոս (Հնախօս. Ը. 6) կ'ըսէ թէ Հըրեայք աւանդութիւն ունէին թէ Սարայի թագուհին, որ բուսաբանական պարտէզներ ունէր շատ տեղեր, Մեֆեի թաղաւանի ծառին տեսակէն ալ Սողոմոնի բերաւ իր նուէրներուն հետ և Յորդանանու հովտին հարաւային կողմերը մշակուեցաւ:



Թրեստրամ կ'ըսէ թէ Եգիպտոսի Կզէոպատրա թագունին Նրիգովէն ստացաւ շատ յարգի տունկեր մշակելու համար Հեղիուպոլիս (Յեգիպտոս) քաղաքին մէջ. այդ տունկերուն մէջ գլխաւոր տեղը կը բռնէր Մեփֆէի բարսան ծառը:

Balsamodendron gileapenseի և Balsamodendron opobalsamumի ծառերուն հիւթեղէն արտադրութիւնը արարական լեզուի մէջ «Պարսաան» անուամբ ծանօթ է. այս բառէն փոխառեալ են Յունարէն βάλσαμον, Լատիններէն «Balsanum». «Balsam» և Հայերէն «Բալսամ» բառերն:

Արաբացի մեծանունը բժիշկը Էպուսինան իր բժշկագիտական գրուածոց մէջ «բալսամ» ծառը կը նմանցնէ «Կիպրոս» (արաբերէն հեննա) ծառին, (Տե՛ս ԿԻՊՐՈՍ = ՀԻՆԱՅ բառը ի Կարգին), և չընդունիր այն կարծիքն մեկնաբաններու թէ «բալսամ»-ը «մալտաքէ» ծառն եղած ըլլայ:

«Գաղատի Բայրաան» բացատրութիւնը թէև մինչև հիմակ Եւրոպայի մէջ կը գործածուի, բայց այժմ ստուգուելով գիտնականօրէն թէ Գաղատէն բալսամն չիւլեր, սրբագրած են գեղագիրներու մէջ այս բացատրութիւնը:

ՎԵՌՈՒՆ. Խ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

## Լ Ե Ջ Ո Ւ Ն

Երբ թոճ ու բոնն Դիսիկն ծոց կը նիւնէր  
Խաւարակու լայն թեւերուն սակ ցայգուն,  
Ու ջուրերուն լոյծ երեսին վրայ երեւ  
Կը սաւառներ կենսաձիր շունչ մեծ Հոգւոյն,  
Իմ դարաւոր կայանքներս ազատուած՝  
Գուրս բռայ յանկարծ լուծանանայ եւ հնչուն.  
Ու „Եղիցի“ն կազմեց ինձմով Տէր-Աստուած,  
Իսկ մարդն հապա կեանքին յանկերգը „Ինչո՞ւ“ն:  
Ջրաբք էի եւ շարունակ վեց օրեր  
Երբ կեանքի լուծն երկարատեւ երկունքէն  
„Եղիցի“ով ա՛լ կասարուն ծնունդ կ'առնէր:  
Լոյսի կանթեղն հո՞ն էր՝ կախուած երկնքէն:  
Շղթայաւար դարեր վազեցով մը հեւոտ,  
Մեծ Երաններ բոլորեցին ու անցան.  
Ու գերագոյն Բանին բերնին մէջ կրակոտ  
Եւ գոռացող մրցեցնչենի եւ այն ձայն  
Եղայ, որ ծիրն ճիւղերէի այն անհուն  
Բոլորեցի շուրջ միջոցի մ'անսահման:  
Անշուք Դիսիկն կեանքը ծընայ եւ շարժուն,  
Օրէկն անշուք դրի կեանքին անվախման:  
Վեցերորդ օրը ցրեցուցաւ իմ հոգին,  
Երբ գերագոյն Բան մընկնչեց ականջիս.  
Հիւզ մը կաւէ պիտի շինեմ քեզ անգին,  
Ուր, ինչպէս ես, դուն ալ դարեր կը հանգչիս:

\*\*\*

Արփին նիւնեց: Ոսկեքեւեռ ծիրանին  
Ծածկեց երկնքն՝ ուր Երչի եւ անհուն  
Ճակասագրիս հեռանկարին ի զընթին:  
Էն կը խոկար գլուխ-գործոցին վրայ քառուն:  
Յանկարծ խոյաց, զիս ափին մէջ բռնած սեղմ,  
Դրախտի մը վրայ, մեծ հրաւակէ՛րք բնութեան:  
Քիչ մը կաւ՝ զերդ բռնտի՝ լրկեց ու հոն մեղմ  
Շունչ մը փրչեց: Ես կաւին մէջն էի այն:  
Բայց այն օրէն եւ կորուսի, ա՛հ, բնաւին  
Վեց օրերու պակեմներ վեհ եւ անհառ.  
Վերյիւծումներ, աղօս բնագրեր սոսկ կաւին  
Հաղորդեցի բոքովանով անհանձնար:  
Ու նրսած հոն հիւղակիս մէջ մըսեղի  
„Եղիցի“ներն կը յիշէի այն բեղուն.  
Հոն ներդաւնակ երգերն բնութեան քաղցրաղի՝  
Ջր կրցին սալ ժայիս մը հակիսին իմ խոհուն:  
Այ հինգերորդ գիշերն ձրգած էր իր ֆոյ,  
Ու ես նստած խորհրդաւոր ծառին սակ  
Կը լրսէի տոպներ սրբիս մէջ սրգոյ.  
Նիւնչ մը ծածկեց կաւին աչքերն պարզունակ:  
Լուսաստուէր մը յանկարծ փաղփում քարձերէն՝  
Եկաւ նրսաւ գրիսիս վրայ հոլաթեւ,  
Ջորութիւն մը կորեց ներսէս ուժգնօրէն  
Ու հեռացաւ սաւառնելով անդեղեւ:  
Հինգերորդ օր, որ բարի էր Արարչին,



Ժպաւունքն մը գրեաց կապել անցեալին՝  
Ուր կեանքներ պիտի երբե՛ք չը կորչին,  
Զի պատմութեան ունի նա մեծ բանալին:

\* \*

Երկու չքնաղ արարածներ հիաստանչ  
Երկա՛ր գիրար կը գրենէին լուռ ու մունջ...  
Կաւի լեզուին հունչ մը զրօք եւ ականչ  
Մը միւսին, ուր պիտի՝ քրքրաւոր այն փայլող հունչ:  
Միոյն կորով մը միւսին ալ գորով  
Միոյն հրաշք մը միւսին ալ հրապոյր:  
Նախ կաւն ինձմով բառեր յօդոյ դեռ քոքով,  
Շիկենցաւ կողմ... ու կ'երկնէր կեանք մ'անհամբոյր...  
Ես կորուսած էի ազնիւ իմ բնութիւն:  
Յանգաւսից ինձ ներկայացաւ ուրուական  
Մ'որ պահանջեց ինձմէ նետեր մահաքոյն.  
Տըւի անոր գորութենէս քիչ մը բան:  
**ԽճճԱՆ**-ա՛յսպէս կոչուեցաւ կողմ գրգամբի  
Կը պըսըսէր պարտէզին մէջ ծաղկասփիւռ,  
Տեսաւ կախուած ոսկի պըսուղը կեանքի,  
Խայտաւ ամբողջ իր էութեամբ, կամով քիւր:  
Մահը կերաւ, մահն հրամցուց նա ինձմով  
Կաւին՝ որ դեռ ծառի մը սակ կը նիւնէր.  
«Ելի՛ր, ըսաւ, ճաշակէ՛ սա պտուղն համով,  
Ո՛վ անփոյթ **Խճ**».- Կաւին անունն ալ ա՛յս էր:

\* \*

Ես լուսափայլ ու կենսասու «Եղիցի»ն,  
Սարսուռն մահուան դասավնիւն հեգեցի.  
Հակիսի քրտանց «ա՛խ»ը եղայ ես կաւին,  
Իսկ գիրք կողին երկունքի «վա՛յ»ն կանացի:

\* \*

Օրեր անցան, երկա՛ր դարեր ինձ համար.  
Մարդիկ ինձ հետ խիստ չարաչար վարուեցան.  
Զիս բաժնեցին ժողովուրդներ անհամար.  
Իրենք երկրի վրայ եղան ցիր ու ցան:  
Ակկասացին, Սոււեհացին, Սեւական,  
Քուլ, Տուրանեան, Քաղղէացին զխաբէրոն,  
Նախաինքին յաւերժական իբր նըշան,  
Թողին աւեր. Բեյն ալ պաշտպան մընաց հոն:

\* \*

Օր մը յանկարծ իմացական «Եղիցի»ն,  
Կայծակնափայլ ունեցիով մը զինուած,  
Հիւղակա այրեց սուրբ բերին մէջ **ՆԱՍԻ** ին:  
Ներքընչուսի հուրն էր այն վեհ, անկասկած:  
Ու նապիններ ինձմով վառուած ձայնեցին  
Թէ հուր Բանին պիտի մաքրէր զիս համբուն,

Ինչպէս երբեմն արարչագործ «Եղիցի»ն:  
Վեց եօթ դարեր ըսպատեցի ես արքուն:

\* \*

Իմ սեղանին առջեւ երկիր պագնեն քող  
Փլիխտիւան, Ասուածաբանն ու քերթող,  
Պատմաբաններ, բանասէրներ ու բնագէտ,  
Զի Բանէն վերջ է՛ս ամենուն մայրն եմ գէթ:  
Իմ երկունքներս են խորհուրդներն այն անհուն՝  
Որոնց գրիչն ու գիր դայեակ են բեղուն...  
Ե՛ս նախապէս գաղափարներ երկնեցի,  
Յետոյ անոնց մարմին զրօք բառացի.  
Ու այդ մարմին կերպարանով զանազան  
Ըսկաւ բնէլ տիեզերքի մեծ շրջան:  
Եանվէն ինձմով ծրնան Սինան, Կարմեղոս.  
Մեծն Արամազդ ինձմով երկնեց Ողիսպոս:  
Դելքիսի մէջ ինձմով պատգամ տուաւ Պիքիան,  
Ըսփինֆա լըկեց զիս Թեքէի առջեւ դրան:  
Ես կայսրութիւնն այցելեցի երկնային  
Կոմիտիկիոսին, Լաօ-ցեօին, Պուսսային.  
Հիմալայեան գագաթներէն մեծ-Պրահման  
Հովիսն իջած՝ Գանգէսի ափն կուգար ման.  
Իսկ իմ ոգիս տասան երեք ալեաց վրան  
Կը ծրնընէր Պրահման, Վիշնուն ու Շիւան:  
Գեղասեսիլ հովիսին մէջ ծաղկասփիւռ  
Ուր բացուէին գեղեցկութիւնք, հազար, քիւր,  
Լոսոսին վրայ ողջունեցի Կոստան  
Որ իմ ծոցէս ուզեց հանել Նիրվանան:  
Անցայ կամուրջը Զինվաթին անյասակ՝  
Ու յըղացայ Զենս-ալեքսան իմաստակ:  
Գեղածիծաղ ափանց վրայ Նեղոսին  
Ծընայ Խիսն ու Ոսիրիսն միասին,  
Ու Մեսրիսի մեհեաններուն վրան ու ներս  
Քանդակեցի խորհրդաւոր նըշաններս.  
Պապիրոսներն հոն երկնեցի գալարուն  
Մեռելոց գիրքը դրածներով հին դարուն:  
Գեսանովսին մէջ Տիգրիսի տարածուն՝  
Կը շրջէին Ասուր, Մարսուֆ եւ Սարմուն,  
Որոնք դերբուկ սեպ ժայռերու վրայ զիս պիրկ՝  
Բեւեռներով գրեցին արձան զգայագիրկ:  
Ուրարդուի բարձանց վրայ երբ գայի հիւռ,  
Քարֆամիսի նշաններով սեպագիր,  
Առագասիս մէջ Անանիս ռսկեծին  
Աստղիկ, Նանէ դիցունիք ծնաւ ի ծոցին:  
Ոմանք ինձի **Հիքիք** ըսին, Քեսացին  
Ոմանք ծնունդ եւրոպացի-Հրեղիկին,  
Այլ՝ կը կրէ, ըսին, արիւն Իրանեան  
Իսկ ուրիշներ Ըսկիւքացոյն խրժական:



Ափրիկէի անհաւանեանն մէջ մըքին  
Ինչ չարչարանք ու լկանքներ ինձ տրին,  
Հողենդոսներն, Պոլիսաններն ծամածուռ  
Մեքենայով զիս նըմեցին ամրակուռ:

\*\*\*

Հազարաւոր դարեր յետոյ որ մը ես  
Տիեզերքի մէջ սարքեցի մեծ հանդէս.  
Ու, ի՛նչ զարմանք, կարող չեղայ ես հանչնայ,  
Թողնորդիներս, բռններս, զաւակս ու զի՛ս ալ:  
Ունեմ խրոպոս, այլ խեցքեկոր ու խուժողւծ,  
Այլ նուրբ, բոլորն անհատ եւ ո՛չ մին անբուծ:  
Մին **ցօցաւիւն**, մին **օս իօս**, միւսն **բըրիւն**,  
Մին ղողանջիւն, մին հարհասիւն, միւսն զանգիւն:  
Մին կապարն մ'ուր կան պողպատէ գուլ նետեր,  
Պրկուած չուաններ, ինչպէս գիտուն մը կ'ըսէր:  
Հոս բեւեռ մը, հոն նրբան մը, գիծ մ'անդին...  
Ես որ անյօդ միակ էի «Եղիցի»ն:

\*\*\*

Բերլենի մըսուրին մէջ ես արթուն  
Երբ խոկայի կոյսի բերնին մէջ անբիծ՝  
Արեւելի աստղի մը ցոլքը ցընծուն  
Ճանաչեց հուրն անկէզ Բանին՝ բաց երկնից:  
Բիւր կեղեւանքս ինկան վրայէս դարաւոր,  
«Եղիցի»ին կրակն առի ես անեչ:  
Ըսի. «Անձրս մեծցուր քու Տէրդ երկնաւոր  
Որ ցընծացուց հոգիս անմահ Փրկչին մէջ:  
Այսօր հետեւ բոլոր ազգեր երանի՛ր  
Պիտի տան ինձ, որ մարդկութեան բաշխեցի

Կենաց Բանին մարմնացումն, ի՛նձ արժանիք:  
Ես Բանն էի օծուն, խոհուն «Եղիցի»:

\*\*\*

Վերացաւ Բանն: Ու հրաշալի դէպքն այս մեծ  
Բոլոր աշխարհ հետախրեց ու յուզեց...  
Ուք օրեր վերջ նոր տեսիլ մ'ալ իմ կեանքէն  
Պարզեցի վար Հրէասանի երկրնէն:  
Սաղիսի մէջ վերնասուն մը սրբաբաժ  
Կար, ուր ձրկնոսք կ'օրհնէին յար իմ Աստուծ.  
Միջագետի Իլամացին, Պարթեւ, Մար,  
Հայաստանցիք եւ Գամրացիք անհամար,  
Ու Պոնտոսի եւ Ասիայի ափերէն  
Փրոկիզիայէն, Պամփիլիայէն տարտօրէն,  
Եւ կողմերէն եգիպտական աշխարհին,  
Լիբեացի, Կիւրենացի, Հոռոմն հին,  
Կրեթացիք, Արաբացիք գունդ ի գունդ  
Դիւնեցի հոն, ուր ոգիներս բունդ ի բունդ  
Բոցանանանչ կամարներէն կապոյտին  
Չըկնորսներու զըլխուն վրայ կ'իջնէին:  
Դալիլիայի բիւր հընչիւնին մէջ անյօ  
Ու հրաշալի շեռք մը դրի ես բզգոյշ.  
Խորհրդաւոր սուրբ կապով մը երկնային՝  
Անոնց միտքերն յողեցի մեծ Խմասին:  
Համազգային բարբառն եղայ ես այն օր,  
Ու մարդոց մէջ միտք մը դրի պայծա՛ռ, նոր:  
Ճրժարտութիւնն որ ունէր մէկ կերպարանք,  
Ճրժարտութեան Հոգւոյն շունչով առած կեանք,  
Պիտի խօսէր հիւղակներու մէջ, ուր ես  
Մէկ զիտութեամբ մտքեր բերի ի նանդէս:

ԳԱՐՅԳԻՆՆ ՎԱՐԳԱՊՅՏ

## Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Հանդէսիս վարչութիւնը կը փութայ հրապարակաւ իր սրագին  
շնորհակալիքը յայտնել հետեւեալ եկեղեցասէր եւ ազնուասիրտ անձներու  
որոնք նիւթապէս սասար հանդիսացած են մեզ, կրօնաբերքիս սկզբնական  
ծախուց մասնակցելով իրենց զուարթաւ ու նուէրներով, որոնց զուամբն է.

|               |                    |             |          |
|---------------|--------------------|-------------|----------|
| Բարիզէն Ա.զն. | Ա. Բանիկ է.Յ.      | Էգնատեան    | 500 Ֆր.  |
| Լոնտոնէն »    | Գալուս է.Յ.        | Կիւլպէնկեան | 500 Ֆր.  |
| Կ. Պոլսէն »   | Գ. Մուրատեան որդիք |             | 540 Լ.բ. |
| » »           | Տիգրան է.Յ.        | Թօփաթեան    | 540 »    |
| » »           | Յակոբ է.Յ.         | Յակոբեան    | 540 »    |
| » »           | Մագունս է.Յ.       | Յակոբեան    | 216 »    |



# ԿՐՕՆԱ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

## 1.—ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՆԱՐԵՆ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յ. ԷՃ. ՄԻՐՔԵՆԱՆԻ

### «ԸՆԿԱԼ ՔԱԼՅՐՈՒԹԵԱՄԲ» (1)

Ընդունէ՛ք զաղցրութեամբ, տէ՛ր Աստուած հօր, զառնացողիս աղաչանքը. մօտեցիր գթութեամբ ամօթահար իմ դէմքիս. փարատէ՛, ամենապարզե՛լ ամօթալի տըխրութիւնս. ա՛ն ինէ, ողորմա՛ծ, անտանելի ծանրութիւնս. հեռացուր, հնարաւո՛ր, քիմ մահացու սովորութիւնքս. աւարէ՛, մշտայա՛ղթ, խարողին հաճութիւնները. ցըրուէ՛, դու երկնաւոր, մառախուղն այն մուկալին. կասեցո՛ւր, կեցուցի՛չ, զիս կապողին չար հնարքն. խորտակէ՛, անքննի՛ն, մարտնչողին յարձակմունքն: Տեառնազրէ՛ անունովդ, բնակութեանս լուսանցոյցն. ամբիփէ՛ քու ձեռքովդ, իմ տաճարիս առաստաղն. գըծազրէ՛ քու արեամբդ մուտքը սեմոց սենեակիս. դրոշմէ՛ քու նշանդ աղօթողիս հետոց վայ. ամբացուր քու աջովդ իմ խշտեակս հանգստեան. պահէ՛ թակարդէ իմ անկողնիս ծածկոցը. ապրեցո՛ւր հաճութեամբ տառապեալ անձս ու հոգիս, անխարդա՛խ յարգարէ՛ քու սուած շունչդ մարմինիս. պահապան դի՛ր շուրջիս պարն երկնային զօրքերուդ, դիմամարտ կարգելով խօլ դէերու խաղմութեան: Դուն հանգի՛ստ տուր բերկրական մահաճըման իմ քունիս գիշերային խորութեանս, խնդրանքով կուսամօրդ և ամէն ընարեւոյ: Պատէ՛, պահպանէ՛ պատուհանն իմ աչքիս՝ զգայարանն այն մտացո իմաստութեանն ու տեսոյն. պահպանէ՛ աներկիւղ խռովութեան

(1) Նաեկացիին այս հասուածիմ մէջ դրուած չափը պահած է թարգմանիչը: Ն. Խ.

ծրփանքէն կենցաղական գործերէն՝ երազներուն անուրջի այն խառն ի խուռն ցնորքէն. որբելով անվիաս մեծ յուշովը քոյ յոյսիդ: Եւ պթափիմ երբ քունիս ծանրը բեռէն խաւարին՝ քու գիմացդ կանգնած հոգենորոգ զուարթութեամբ՝ հաւատքի բուրումով ես այս ձայնն աղօթքի, երկնային աղօթող խուճերու երգակից, ուղղերձեմ՝ դէպ յերկինս, քեզ օրհնեալ թաղաւոր տէ՛ր անճառ փառքերու: Վասնզի դու ամենէն փառասորեալն ես յաւէտ յաւիտեանս անվախճան միշտ ամէն:

Թրգւմ.

Յ. ՄՐՔԵՆԱՆ

## 2.—ԹԱՏԵՐԱԿԱՆ

Ա. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

ԿԱՄ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ

### ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ (\*)

Մէկ նախերգանով, վեց արարուածով եւ մէկ վերջաբանով.

ԳՐԵՑ

ԳԱՐԵԳՐԵՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(Ի Դպրեվանդ)

(Շարունակութիւն Ա. թիւին)

Սահակ

Բայց անիծեալ ըլլան մանուսնիդ ամէն անունք՝ որոնք Արշակունեաց թագը հրամացեցին անոր, եւ այսօր ալ կ'սուզին Տիգրոնի գահոյքին առջեւ զայն ստրկական սողոսկումներով:

(\*) Ամեն իրաւունք հեղինակին վերապահուած է



### Վարդան

Արտաշէս անգղային ամէն իրաւունք ունակութիւն ըրաւ իր տղայական դատաւարանի անփութութեամբ՝ որով կը դիտէ ու կը վարէ աշխարհի գործերը։ Յաւալին այն փութ իրականութեան մէջ է որ Հայոց թագաւորը Արտաշէս մեղած է քան Արտաշէս՝ Հայոց թագաւոր։ Քանի՜ քանի անգամներ տեսակցեցայ իր հետ մանրամարտ, անկեղծօրէն խօսեցայ իրեն ամէն ինչ, զարհուրելի հաւանականութիւններ պարզեցի իր առջեւ, սարքուող մեքենայութիւններու իրազեկ ըրի գինքնը։ Բայց՝ անօգուտ, նա խիստ ինքնահաւան ու կարծաւոր է։ Հուզեր կարեւորութիւն ընծայել այն ամէն զրոյցներուն՝ որոնք իրեն անձին չուրջը կը դառնան։ Իսկ բարոյականի մասին եղած բռն քննադատութիւններու վրայ եւ ոչ իսկ կ'ուզէ խօսիլ։ Ամէն պարագայի մէջ իրերու վախճանը շատ լաւ չեմ տեսներ, իմ պապ։

### Սահակ

Ինչ որ ըսիր Արտաշէսի մասին՝ ճշմարիտ է։ Բայց, ինչպէս ըսի, աւելի դատաւարանի են նախարարները՝ իբրեւ տիրաններ եւ մանաւանդ հայրենագրութ։ Օտար ոգի մը կը գործէ նախարարներուն մէջ, եւ այդ՝ Տիգրանի ոգին է։ Ղաւազրութիւնը դուրսէն է՝ որ սակայն կը գործէ ներքնապէս։ Փառասիրութիւնը կուրցուցած է անոնց աչքերը։ անոնք չեն կրնար տեսնել զաւրիտակ ծածկուած իրենց իսկ կորուստը։ Հայրենիք չիկայ, սիրելիս, այդ նուիրական սրբավայրը հիմա փոխանակուած է հազարամէկ աղաւտ ու մեռած հայրենիքներով, պղտիկ ետերով...

### Վարդան

Որոնց մէջ մեծամտութիւնը կը շահապետէ սակայն...

### Սահակ

Այդ փոքրօրէնները, իմա Վարդան, չեն ապրիր ու գործեր հայրենիքի փառքին համար, հապա կը շահագործեն հայրենիքը իրենց անամէջ փառքին համար։ Այսպիսի-

ները ազգին ամենամեծ պատուհասները եղած են ամէն ժամանակ։ Արքայից արքան շատ քաջ ճանչցած ըլլալու է Հայոց այս կործանարար թերութիւնը։

### Վարդան

Բոլորովին ճիշտ է ձեր կարծիքը. եւ ամէնէն աւելի Սիւնեաց նախարարութիւնն է՝ որ կը ջանայ ի նպաստ իրեն գործածել Տիգրանի այդ չար ոգին։ Արքանեակներ ալ չեն պակսիր իրեն, որոնց մէջէն կարելի է յիշել մասնաւորապէս Վահեղունեաց Գիււս նախարարը, որ սակայն ճարպիկ երկերեսութեամբ մը սրտին մաղձը կը ծածկէ դեռ, զազանի լրտեսի դեր մը կառարելով յաճախ Վասակի մօտ՝ որ պէտք է ըսել, Հայոց թագը կ'երազէ։

### Սահակ

Եւ ստոյգ գիտեմ թէ Գիւս ալ Վասակի համամիտ է։

### Վարդան

Բնաւ կասկած չիկայ։

### Սահակ

Նոր եւ զարմանալի յայտնութիւն. չեմ ուզիր հաւատալ, Վարդան։

### Վարդան

Ամէն բան ապագան պիտի յայտնէ, իմ պապ։ Այդ ապագան բեղուն է գաղտնիքներով՝ զորս ներկան կ'անգիտանայ եւ որոնց թափանցել բոլորովին անհնար չէ, երբ միանգամ կը յաջողի մարդ մէկ կողմէ կշռել Տիգրանի լարուած քաղաքականութիւնը եւ միւս կողմէ չափել Վասակի ծրագիրները եւ վերլուծել անոր նկարագիրը։ Գիւս՝ զուրկ Վասակի հանճարէն՝ խաղալիկ մ'է լոկ անոր ձեռքը, թէեւ, ինչպէս ըսի, վարպետութեամբ կ'աշխատի իր ազատ դերը։

### Սահակ

Զիկան, ուրեմն, բնաւ անկեղծ ու վրաստանի նախարարներ։

### Վարդան

Կը գտնուին, իմ պապ, անձնուէր եւ



հայրենիքի սիրով վառուած՝ նախարարութիւններ, որոնցմէ են, զոր օրինակ, Կամսարականաց, Դիմաքսենից, Ամասունեաց և այլն, տանուաւորները: Ասոնք ի հարկին կրնան հակադդեցութիւն մը ստեղծել Սիւնեաց նախարարութեան դէմ. բայց...

#### Սահակ

Կը հասկնամ, կը հասկնամ թէ ի՞նչ ըսել կ'ուզես: Բայց, քանի որ խնդիրը անարժան թագաւորի մը շուրջ կը դառնայ և և մանաւանդ որ Տիգրանի միջամտութիւնը կայ՝ դժուար պիտի ըլլայ հակարտաշէսեանները ընկճել: Ատիկա քաջ գիտեմ, իմն Վարդան: Ասկից դատ՝ Տիգրանի դէմ կայ Բիւզանդիոնը. վա՛յ այն աշխարհին որ այս երկու հակընդդէմ զօրութիւններու միջև կը գտնուի: Երկու տէրերու ծառայել անհնար է, մին թողուլ և միւսին յարկը՝ վտանգաւոր. և ահա այս երկայրի սուրէն պիտի օգտուին հայրենիքի դաւաճանները:

#### ՏԵՍԻՒՂ Գ.

#### ՆՈՅՆՔ ԵՒ ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ.

(Հազիւ Սահակ աւարտած էր իր խօսքը՝ երբ ներս կը մտնէ Եղիշէ Եպիսկոպոսը).

#### Սահակ

Օ՛, ո՛րքան ուշացար:

#### Եղիշէ

Իրաւունք ունիք: Չկանխատեսուած պատահականութիւնները կը խանգարեն յաճախ մարդկային տնօրէնութիւնները:

#### Սահակ

Ճշմարիտ է: Ի՞նչ նոր տեղեկութիւններ կրցար առնել:

#### Եղիշէ

Նոյն զրոյցները, միևնույն տարածայնութիւնները: Ժողովուրդը չափազանց զբոգըռուած է պալատին դէմ և Ձեր Սրբութիւնէն կ'սպասէ իմաստուն տնօրէնութիւն մը: Է՛հ, արդար ըլլալու համար Արտաշէս ա՛լ չափը անցուց:

#### Վարդան

Իրաւունք ունիք, Սրբազան, բայց նա-

խարարներն ալ վատ են, չափ վատ: Անոնց նպատակը չէ թագաւորը պատժել, այլ սիրանալ անոր թագին, միջնորդութեամբ այնպիսի զօրութեան մը՝ որ անկասած ի՛ր հաշուոյն միայն գիտէ գործել: Ինչպէս պապս քիչ մ'առաջ շատ ուղիղ կը դատէր՝ Տիգրանէն դրդում կայ: Նա ամբողջ իր ուշադրութիւնը դարձուցած է Հայաստանի վրայ: Սիւնեաց նախարարը ամէնէն աւելի կրցած է շօշափել արքունիքի այդ արամադրութիւնները: Վասակ դաւաճան մ'է հայրենիքին, այո՛, այն սուտութեամբ որ պարսկամէս քաղաքակաւութեամբ մը կը փորձէ ձեռք բերել Սրշակունեաց մենաշնորհ Հայաստանի թագը: Մենք Մամիկոնեաններս չենք կրնար համակերպիլ այս քաղաքակաւութեան և քաջալերել Սիւնեաց նախարարութեան յաւակնութիւնները:

#### Եղիշէ

Կ'ըսես թէ Տիգրանէն դրդում կայ. ստոյգ բան մը լսած ես թէ կ'ենթադրես:

#### Վարդան

Կ'ենթադրեմ, բայց ենթադրութիւնս իր հաստատուն կռուանն ունի:

#### Եղիշէ

Ի՞նչ է այդ կռուանը. կարծեմ նոր յայտնութիւններ եղած են քեզ:

#### Վարդան

Այո՛. Վասակ գաղտնի յարարերութիւններ կը մշակէ Վահագնի շնորհակալ հետ:

#### Սահակ

Վարդան, ունի՞ս փաստեր:

#### Վարդան

(Համոզկե՛ր շեճով մը)

Վասակ կը թղթակցի Վահագնի շնորհակալ հետ, ի՛մ պապ, և այդ գաղտնի թղթակցութիւններուն նպատակը ուրիշ բան չի կրնար ըլլալ՝ բայց եթէ դաւադրութիւն մը: Դուք լաւ ճանչցած ըլլալու էք Վահագնի շնորհակալը, արքունիքի այդ ստատանորդին, որուն խելքն ու միտքը Հայոց աշ-



խորհին վրայ է : Շապուհն Պարսիկի քառ-  
ամեայ թագաւորութիւնը Հայաստանի  
վրայ՝ երեւակայութեան և ոսկի երազներու  
նոր դուռներ բացաւ Պարսիկ աւագանի-  
ներու առջև : Վեհմիրչապուհն անոնցմէ է :  
Վասակ՝ վասան եւ որ պիտի ջանայ օգ-  
տուիլ անոր այդ երազներէն : Վեհմիրչա-  
պուհ և Վասակ զիրար պիտի խորհն :

#### Սահակ

Ասկէ ի՞նչ օգուտ կրնայ քաղել Վասակ :

#### Եղիշե

Ես կը կարծեմ ո՛չինչ :

#### Վարդան

Այո՛, ո՛չինչ . Վասակ ի վերջոյ պիտի  
իյնայ Վեհմիրչապուհի ծուղակը . բայց . . .

### ՏԵՍԻՆ Դ.

#### ՆՈՅՆՔ ԵՒ ԱՂԱՆ ԵՐԼՑ

(Գուրեհն աղուկ մը կը լսուի)

#### Սահակ

Ի՞նչ աղմուկ է այն :

(Վարդան դուրս կ'ելլէ անապատեցով)

#### Եղիշե

(Ոսկի ելլելով եւ դէղի դուռը յառաջանալով)

Մի՛ վրդովուիք . փողոցային սովորական  
անցք մը ըլլալու է :

(Աղմուկը կը կրկնուի)

#### Սահակ

(Ոսկի ելլելով)

Տէ՛ր, սղորմեա՛ :

(Ներս կը մտնեն Վարդան եւ Աղան)

#### Սահակ

Ի՞նչ էր այդ, Վարդան :

#### Վարդան

(Հանգիստ՝ բայց ինքուր շեշտով մը)

Բան մը չիկայ, իմ պապ . երկու մար-  
դիկ վէճի մը բռնուած էին, որ յետոյ փոխ-  
ուած է կռիւի :

(Մէկ կողմ դառնալով եւ ցած ձայնով)

Է՛հ, գեղջուկն իսկ այս խնդրով կ'ըրա-  
ղի, ամօ՛թ Արտաշէսին . . .

#### Սահակ

Աստուած չնո՛րէք տայ :

#### Աղան

Վէրքը կը ծաւալի, Սրբազան Տէր, դար-  
մանը պէտք է փութացնել : Այն կռիւ մը  
չէր իսկապէս, այլ ժողովրդային բողոքի  
մէկ ձայնը՝ չինականի մը բերնէն դուրս  
թռած . . .

(Բոլորն ալ կը նստին)

#### Եղիշե

Ինչպէս կը տեսնուի՝ շատ փափուկ կա-  
ցութեան մը մէջ կը գտնուինք : Որոշ դը-  
րութեամբ կը գործեն նախարարները . Ար-  
տաշէս պէտք է գահագուրկ ընել արքայից  
արքայի միջոցաւ : Եթէ անհնար ըլլայ ընդ-  
հանուր համաձայնութեամբ կարգադրել  
այս խնդիրը՝ պատրաստ է դաւը : Արտա-  
շէս պիտի ամբաստանուի իբրեւ մէկը՝ որ  
գաղտնի յարաբերութիւններ կը մշակէ  
Բիւզանդիոնի հետ, ապստամբական ծրա-  
զիրներ պատրաստելով Արեւոյ աշխարհին  
դէմ :

#### Վարդան

Եւ պտպս ալ պիտի ամբաստանուի իբ-  
րեւ քաջակերող յունամէս այս շարժումնե-  
րուն, չէ՞ :

#### Սահակ

(Գլխի հաւանակամութիւն յայտնող շարժումով)

Տարակոյս չիկայ :

#### Աղան

Նոյնը կը խորհիմ ե՛ս ալ . միայն թէ ա-  
ռանց նախարարներու քրութեան Տիգրան  
արդէն կասկածոտ վերաբերում մ'ունի  
Բիւզանդիոնի հանդէպ, հակառակ հաշտու-  
թեան այն դաշինքին, որ երկու տարի ա-  
ռաջ հաստատուեցաւ երկու պետութիւն-  
ներու միջև : Հայաստանը խայծ մ'է, զոր  
մին կամ միւսը պիտի ջանան կլլել : Բիւ-  
զանդիոն առ այժմ ակար է, կամ ի վի-  
ճակի չէ փորձ փորձելու . իսկ Տիգրան



ընանականաբար պիտի ուզէ օգտուիլ պատեհութենէն :

#### Վարդան

Ահա՛ , ա՛յս իսկ է խնդրին լրջութիւնը , ամէն ինչ քաղաքական ծրագրի մը շուրջը կը դառնայ : Ծրագրիւր կը դիտուի զանազան հայեցակէսներէ եւ զայն գործադրելու միջոցները կը պէսպիսին իւրաքանչիւրի տեսակէտին համեմատ : Իրանի միջոցը տարակցայ չիկայ թէ համադրողաշտականութիւնն է , կրօնքին հետ լեզուն եւ լեզուին հետ ազդութիւնը ձուլելով պարսիկ կաղապարին մէջ եւ այսպէս ջնջելով Հայաստանի անկախութիւնը եւ վերածելով զայն պարսկական նահանգի մը :

#### Աղան

Եւ Վասակ համամիտ կը գտնուի՞ այս ծրագրին :

#### Վարդան

Երբէ՛ք : Հայաստանի թագը երազող մը չկրնար այդպիսի բաղձանք մ'ունենալ : Բայց նա իր նպատակը իրազօրծելու համար ամէն ստորին միջոցներու կը գիջանի : Եթէ , զոր օրինակ , Մազեկանց կրօնը կը խոտտանայ իր ծրագրի գործադրութիւնը՝ նա երբէք չվարանիր անով փոխանակելու քրիստոնէական կրօնը , առանց խորհելու թէ կրօնքները նախադուռներն են յաճախ ազգայնութիւններու սիրապետութեան : Ես համոզուած եմ թէ Վասակ իրեն սկզբունք ընտրած է՝ Հայրենիքի գերակշռութիւնը կրօնին վրայ , եւ ծրագրին է՝ Կրօնը ծայցեցնել պահ մը , միևնույն ինքը տեսնելու Արշակունի քաղիւն ժառանգութեան :

#### Աղան

Ուրեմն զիւանագիւնօրէն կը գործէ Վասակ :

#### Վարդան

Այո՛ , զիւանագիւնութեամբ , բայց սխալ ու նենգաւոր զիւանագիւնութեամբ :

#### Աղան

Եւ ի՞նչու :

#### Վարդան

Վասնզի Տրդրոն երբ միանգամ յաջողի

հաստատուն ոտք դնել Հայաստանի մէջ՝ Վասակ չկրնար տեսնել իր երազածը : Արեւայ աշխարհը լաւ կը ծանօնայ Հայերը եւ մանաւանդ Հայոց նախարարները եւ շուտով չխաբուիր անոնց նենգամիտ շարժումներէն : Վասակ առ առաւելն մարդկային մը կրնայ ըլլալ եւ ոչ այլ ինչ :

#### Աղան

Ձե՛ր սկզբունքը ինչ է , սպարապետ :

#### Վարդան

Հայրենիքի փրկութիւնը եկեղեցիի անձեռնմխելիութեամբ : Ինծի համար կրօնքը հայրենիքի կեանքն է : Տիգրան մեր նախարարներէն աւելի ազէկ ճանչցած է այս ճշմարտութիւնը . ասոր համար մեր հայրենիքի հայեցի կեանքը՝ Քրիստոսի ու Լուսաւորչի կրօնքը՝ կ'ուզէ փոխանակել պարսիկ կեանքով՝ զրազաշտական կրօնքով :

#### Աղան

Բայց չէ՞ որ նախարարներն ալ Արտաշէսը կ'ամբաստանեն յանուն կրօնքի , քրիստոնէական նախանձախնդրութեամբ լեցուած : Անոնց առարկութիւնն է . «չենք ուզեր որ անոր սրբութիւնը արհամարհող ամբարշտ թագաւոր մը իշխէ մեր վրայ» : Կրնա՞նք ըսել թէ անիրաւ են :

#### Վարդան

(Հեզմոտ եւ կծու հմծիծաղով)

Հը՛ հը՛ . . . տարակոյս չիկայ թէ անիրաւ են :

#### Աղան

Ի՞նչպէս :

#### Վարդան

Ես կը փափաքէի որ պապս պատասխաներ :

#### Սահակ

Եթէ ամբարշտ է թագաւորը , Տէր Աղան , օրինաւոր է սակայն բողոք կարգալ Պարսից դրան : Աւելի տրամաբանական չէ՞ , եթէ անպատճառ մէկու մը դիմել անհրաժեշտ է՝ միջնորդութիւնը խնդրել Յունաց կայսեր , որ զէթ քրիստոնէայ է :



# Վարդան

(Ոսկի ելեղով եւ բարկացոս շեռով մը)

Ո՛հ, ո՛հ, իմ պապ . ես Յունաց կայսրէն ալ լան մը չեմ սպասեր : Նա երկչոտ եւ թոյլ մարդ մը կ'երեւի : Չէ՞ք յիշեր Պարսից հետ հաստատած խաղաղութեան դաշինքի այն ամօթալի պայմանը , որով նա կը հրաժարէր պաշտպանելէ այն Արաբները՝ որոնք կայսեր պիտի ուզէին ապաւինիլ : Այդ դաշինքը կռող մը երբէք պիտի չկրնայ պաշտպանել երկիր մը՝ որուն վրայ Պարսիկ պիտի թախը երկարած է ճիւղալային սպառնալիքով մը : Ահա թէ ինչո՛ւ համար չեմ ուզեր Արաաշէսի գահադրկումը : Արաաշէսէ վերջ Հայաստանի տէրը Տիգրանն է : Եթէ նախարարները փառասիրութեամբ կուրացած չըլլային՝ ապահովաբար պիտի չուզէին խնկարկել Զրադաշտի սեղանը եւ արքայից արքային հայրենադատ ծրագիրները անբարոյական չողումանքով մը՝ որ սակայն օր մը ապահովաբար յուսահատուցողիչ պատրանքի մը մէջ պիտի ցնդէ իրենց բոլոր չղջողուն երազները : Անցեալը մեզ ցոյց կուտայ թէ օտար զօրութիւններ միշտ աղէտալի եղած են մեր երկրին համար , թէ՛ քաղաքակոնապէս , թէ՛ բարոյապէս եւ թէ՛ կրօնապէս : Վառնդի օտարի քաղաքականութիւնն է կամ բացայայտ ու կործանարար թշնամութիւնն այլամերժ ոխակալութեամբ եւ բռնաւորի անգթութեամբ զինուած , կամ կեղծ բարեկամական սուղակով շնթումներ՝ որ անողալաբար եւ անվրիպելիօրէն կը պատրաստեն ազգերու անկումն ու մահը . ինչպէս՝ միւս կողմէ՝ նախարարական դրութեամբ քաղաքականութիւնն է , ընդհանուր առումով , անջատականութիւնը՝ ի վնաս հայրենիքի ամբողջական միութեան , կամ զօրաւորին քաղաքակ ու անպատասխանատու սիրապետութիւնը ի վնաս երկրին հաւաքական ոյժերու առանձին ինքնուրոյնութիւններուն , որոնք սակայն իրենց անկախութեամբ հանդերձ պարտաւար են համերաշխութեամբ եւ հասկացողութեամբ գործակցել հայրենիքի շահերու պաշտպանութեան համար եւ անոր գոյութեան սպառնացող

որ եւ է շարժումի դէմ : Յաւալի է որ այդ երկու քաղաքականութիւններն ալ այսօր կը գործեն տենդազին մեր հողին վրայ եւ անկէ դուրս : Սիւնեաց տունը մէկ կողմէ՝ իրեն օժանդակ համախոհներով , ե Տիգրանի արքունիքը միւս կողմէ իրեն պալատականներով եւ արքանեակներով : Բնական է որ մին զմիւսը պիտի չէզոքացնէ եւ փճացնէ , եւ աւելորդ է ըսել թէ տուժողը կամ տեղի տուողը պիտի ըլլայ Հայ նախարարութիւնը եւ իրեն հետ գուցէ ամբողջ Հայ աշխարհը :

Դարձեալ կը կրկնեմ , իրերու այս վիճակին մէջ Բիւզանդիոն ոչինչ կրնայ եւ թերեւս կ'ուզէ ընել , վառնդի դժուար չէ տեսնել թէ Հայաստանի ներքին ոյժը , որ հայրենիքի հողին իսկ է , աւելի արեւելքի՝ սրտմաղբելի է քան արեւմուտքի : Մենք պէտք է ջանանք ոգի ի բռն ստեղծելու եւ զօրացնելու ընտանի , կորովի եւ ընդգլմահար ոյժը՝ հայրենիքի հողին , կարենալ հակադէմնելու համար թշնամի զօրութիւնները եւ ի դերե հանել անոնց բոլոր ռանձգութիւնները՝ պահպանելու համար հայրենիքի ամբողջութիւնը անվթար եւ անձեռնմխելի :

Արաաշէսի գահին սասանումը՝ Սասանեան մականի կործանարար հպումը պիտի ըլլայ Հայաստան աշխարհին : Ահա իմ անխախտ դաւանանքը :

(կը նստի)

Եղիշե

Ամէն կերպով ձայնակից եմ Վարդանի եւ դաւանակից անոր . հայրենիքի փրկութիւնը հայրենիքի ոյժերով . չխաբուինք ո՛չ Բիւզանդիոնէն , ո՛չ ալ Տիգրանէն : Մեր վէրքերը մեր իսկ ձեռքով դարմանենք : Մենք ուրոյն ազգ մ'ենք , ունենալով սեփական թագաւորութիւն եւ քահանայութիւն . քան զաքական եւ եկեղեցական իշխանութիւններ՝ որոնք անկեղծ ու համերաշխ գործակցութեամբ հրաշքներ կրնան ծնիլ :

Երկուքին ալ պատուական ներկայացուցիչները կրնանք չնորհաւորել յանձին Զեր սրբութեան , Տէ՛ր հայրապետ , ե Չեր սրբութեան , Տէ՛ր Մամիկոնեան : Զեր հոգիներու միացումը պէտք է կողմէ այն



պայծառ մտասխալարը՝ որուն պիտի յառին ամէն ճշմարիտ Հայու աչք և որ միայն կրնայ պահել մեր ինքնութիւնը :

#### Աղան

Եղիշէ Սրբազանի խօսքերը գօտեմնուող և ճշմարիտ են : Հայ մը տարբեր պիտի չկրնար զգալ ու խորհիլ՝ այս վտանգաւոր դրութեան մէջ մանաւանդ : Այս է գործելու խօնեմ եղանակը : Սպարապետը սուղիւ արամաբանեց, Սրբազանը իրաւամբ դաւանակցեցաւ . նա Հոյ հոգեւորականութեան կողմէ խօսեցաւ :

#### Սահակ

Եղիշէ եպիսկոպոսի խօսքերը որքան գոհունակութեան արժանի՝ լոկ իբր թեւադրութիւն կ'ընդունիմ և այն շատ սիրով : Այո՛ , իբրեւ Հայ հոգեւորականութեան պետ՝ ես պատրաստ եմ հովուի մը նման , աշխուրջ և շրջահայեաց , առջեւ ինչպէս վտանգի դէմ գտնուող հօտին , զօրացնելով զայն հոգեւորապէս : Բայց ես ինքս ոչինչ եմ առանց իմ հովուակիցներու , որոնցմէ արժանաւորագոյններով

շրջապատուած ըլլալս մեծ մխիթարութիւն է ինձ համար : Քաղցէ՛ք ինձ հետ , պատուական երիցակիցներս , անիրաւութեան դէմ ցցուող արդար սուրին քով բարձրացնենք մենք ալ անձնապահութեան մեծ նշանը՝ խաչը : Հայրենիքի կեանքն ու մահը այս երկու զօրութիւններու գիրկընդխառնումէն կամ անջատումէն կախումն ունի :

(յուզուած Վարդանի դառնալով)

Սիրելի թոռս , հոգիս Վարդան , կը տեսնես որ շատ ինչ կ'ակնկալուի քննէ . ցոյց տուր թէ արժանի ես ազգին վստահութեան և համակրութեան . եթէ հարկ ըլլայ՝ թափէ՛ արեւնդ . անով ոռոգուած հայրենի հողը պիտի ցնծայ փրկութեան ազադակներով :

Հիմակ մեր պարտականութիւնն է պաշտպանողական դիրք մը բռնել : Բացարձակապէս պէտք է մերժել նախարարներու խորհուրդը , պայքարիլ անոնց դէմ , մեր թագաւորութիւնը չյանձնել օտարին , Սրբաւիշապ պահել իր գահուն վրայ և մեղէն խորհիլ այնպիսի կարգադրութիւն մը՝ որով փրկուի թէ՛ ազգային արժանապատուութիւնը և թէ՛ հայրենիքը՝ այս անկարգ ու վտանգաւոր կացութիւնէն :

## ՔԱՐՈՋԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

“ Եւ վաղվաղակի աղաղակեաց ոայր մանկանն եւ ասէ . Հաւատամ , օգնեա՛ առնաւորքեանս իմում , ” :

ՄԱՐԿ. Թ. 23.

Ահա՛ մարդ մը բոլորովին անձկութենէ մղուած , կ'իսնդրէ եւ միջոցներ ի գործ կը դնէ , եւ սակայն իւր խնդրածը անմիջապէս չեւոյրհրուի իրեն :

Այսպէս նաեւ , շատեր լքօրէն իրենց հոգիին համար կ'աւելասին եւ սակայն չեն գտնել անմիջապէս գիտակից փրկութիւն մը :

Այս բանը կ'մղէ զիրենց աւելի խորին վշի մը :

Թերեւս այնպիսիներ այս հօրը վիճակէն պիտի կրնան օգտուիլ հասկնալու համար իրենցը : Իր որդին չէր բժեկուած . բնդհակառակը աւելի վատթարագոյն կ'երեւէր քան երբեք :

Մակայն իրողութիւնը կ'յանգի բարեբասիկ արդիւնքի մը Տէր Յիսուս Քրիստոսի զօրութեան միջոցաւ :

Ուշադրութեամբ դիտենք պարագան եւ նկատի առնենք .

Ա. ԿԱՍԿԱՆԵԼԻՎՅ ԴՅՈՒՍԲՈՒԹԻՒՆԸ .

1. Հայրը կրնայ խորհած ըլլալ քեւտակեցնելուն հետ գործ ունենայ :

Սակայն անոնք առանձինն՝ որ եւ է բան չէին կրնար ընել :

Երբ անոնց Տէրը իրենց հետ եղած ըլլար , անոնք կրնային ամեն ինչ ընել : Դիտաւոր դժուարութիւնը աւակեցնելուն հետ գործ ունենալը չէր , քեպէտեւ մասամբ կրնար ըլլալ :

2. Հաւանականաբար կ'խորհէր քեւա-



րագան ինքնին անյուսալի եր գրեթէ :  
Հիւանդութիւնն եր .

Ա՛յնքան տասիկ եւ խորհրդաւոր :

Ա՛յնքան բռնուն եւ յանկարծական իր նո-  
պաներուն մեջ :

Ա՛յնքան արնասացած եւ երկարատեւ :

Ա՛յնքան մեծ վերջնականապէս փայա-  
յեղաւ անոր կեանքը :

Բայց յետ ամենայնի, մեր վիճակը չե՛այն,  
ո՛չ ալ անոնցր որոնց համար կ'աղբերենք  
եւ որոնք աստուածային զօրութեան դէմ ար-  
տասովոր խոչընդոտ կ'հանեն. Տէր կ'սիրէ  
անհնարաւորները հնարաւոր ընել :

3. Նա մասամբ կ'խորհէր քէ դժուարու-  
թիւն մը պիտի կրնար ունենալ Տիրոջ  
մօտ ալ . «Եթէ կարող ինչ ես , օգնեա՛  
մեզ, գրացեալ ի վերայ մեր» :

«Եթէ կարող ինչ ես» : Երբ տեսած ըլ-  
լարԱլլակերպութիւնը պիտի նանչնար  
Տիրոջ զօրութիւնն ու փառքը :

Սիրքը պիտի զգար ապահովաբար քէ  
Փրկչի գթութիւնն արդէն իսկ դրդը-  
լած եր :

Ապահով եղիր, ո՛վ Տագնապեալ Սիրք, քէ  
եւ վիճակիդ դժուարութիւնը միմիայն եւ  
հաւաստիք բերութեան մեջն ե :

#### Բ. ԱՐՏԱՍՈՒՍԼԻՅ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԸ .

«Վաղվաղակի աղաղակեաց հաւատամ ,  
օգնեա՛ անհաւատութեանս իմում» :

Տէր Յիսուս մեծեց այդ ընդմեջումը, վասն  
զի իւր զօրութեանը վրայ տարակոյս մը  
կը բերէր, եւ զուրկ հօրը դարձուց «Եթէ»ն,  
«Եթէ կարող ես հաւատալ» խօսով :

Ուրեմն .

1. Մարդուն բերամտութիւնը կ'յայտնէ իր  
անհաւատութիւնը :

2. Կը սասանի եւ կը վրդովի, ի տես իր  
իսկ անհաւատութեան :

3. Կը դարձնէ իր խորհուրդները եւ ա-  
ղօթքները ա՛յն ուղղութեան : Հիմա «Օգ-  
նեա՛ որդւոյ իմում»ը այնքան մեծ չէր,  
որքան «օգնեա՛ անհաւատութեանս ի-  
մում» ըսելը :

4. Նա խորապէս մեղին եւ անհաւա-  
տութեան վստահին գիտակից եղաւ :

Մենք ալ նայի՛նք անձնապէս այդօրինակ  
ուղղութեան, եւ պիտի տեսնենք քէ անհա-  
ւատութիւնը վրդովիչ եւ մեղապարտ բան  
մըն ե . վասն զի կ'ստրակուսուի .

Ամենակարողին զօրութեան վրայ ,

Աստուծոյ խոստման արժեքին վրայ ,

Իրիստոսի արեան արդիւնագործութեան  
վրայ ,

Իւր միջնորդութեան գերակշռութեան  
վրայ ,

Ս. Հոգւոյն ամենազօրութեան վրայ ,

Աւետարանի ճշմարտութեան վրայ .

Արդարեւ , անհաւատութիւնը զմեզ Աս-  
տուծոյ փառքէն կ'հեռացնէ եւ չկրնար բե-  
րել Տիրոջ օրհնութիւնը մեր վրայ : (Եբր.  
ԺԱ. 6.)

#### Գ. ԲԱՆՍԱԻՈՐ ԿՈՉԸ .

«Հաւատամ, Տէ՛ր, օգնեա՛ անհաւա-  
տութեանս իմում» .

Իր մեծ վարանումին մեջ միայն կ'աղա-  
ղակէ Յիսուսի .

1. Հաւատս իսարիսխին վրայ , «հաւա-  
տամ, Տէ՛ր» :

2. Մեղքի խոստովանութեամբ , «անհա-  
ւատութեանս իմում» :

3. Մեկու մը՝ որ գիտէ քէ ի՛նչպէս պէտ-  
է օգնել այս իրողութեան մեջ. «Տէր,  
օգնեա՛» :

4. Մեկու մը՝ որ ինքնին իսկ լաւագոյն  
դարմանն է անհաւատութեան . «Օգ-  
նեա՛» :

Անհաւատութիւնը կ'յաղթահարուի երբ  
վերանանք Յիսուսի եւ նկատի առնենք . —  
Անոր Աստուծային բնութեան մեծ  
փայլեղութիւնը .

Մարդկութեան վրայ ունեցած խանդա-  
ղասանքը .

Իր գործերուն շնորհագեղութիւնը .

Իր գոհին մեծօրութիւնը .

Իր գործին փառաւոր առարկան .

Եկե՛ք Յիսուսի ո՛ր եւ է նամբով կամ  
ամեն պարագայի մեջ . Եկե՛ք ձեր դուզ-  
նախայ հաւատով , եւ ձեր մեծ անհաւա-  
տութեամբ . վասն զի այս իրողութեան մեջ  
ալ նա կրնայ օգնել , որչափ չեն կարող  
ուրիշներ :

Թարգմ. Անգլիկէէնէ

(ՍՊԵՐՃԸՆ) Դ.Ե.ՈՒՆԴ. Դ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ՎԱՐԻԶ.— ԴԵԻՈՆԴ Ծ.Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ.— ԴԱՐԵԴԻՆ ՎՐԻ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

#### ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան Գործակցական Ընկերութեան

Պատր Ալի հասէտի Սեփեթիլէր փողոց Թիւ 27



Պերուք  
Պրուսա  
Ռուսնուք  
Ռոսոսք  
Սամսոն  
Սերասիա  
Սելանիկ  
Սոֆիա  
Տեսե աղան  
Տիարպեիր  
Տրապիզոն  
Բարիզ  
Քեօքանիա  
Քեօքեցե  
Քդի  
Ֆիլիպե  
Ֆրեզո

Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկիէլ Վրդպ.  
Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպիսկ. Արշարունի  
Տ. Մկրտիչ Քհնյ. Մրջիկեան  
Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող Քհնյ. Թաքմէեան  
Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդպ. Օտապաշեան  
« Տ. Թորգոմ Ծ. Վրդպ. Գուշակեան  
Հոգեւոր Տեսուչ Տ. Սերովբէ Քհնյ. Ներշապուհ  
Տ. Մեսրոպ Քհնյ. Տ. Մեսրոպեան  
Տ. Յուսիկ Քհնյ. Դատաւորեան  
Առաջնորդ Տ. Զաւէն Վրդպ. Տ. Եղիաեան  
« Տ. Էմմանուէլ Վրդպ. Պալեան  
Հոգեւոր Տեսուչ Տ. Վառաշապուհ Քհնյ. Քիպարեան  
Առաջն. Փոխանորդ Տ. Մեսրոպ Քհնյ.  
Ֆրէնկեան Եղբարք  
Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդպ.  
Տ. Տաճատ Քհնյ. Դերձակեան  
Ագն. Յակոբ Էֆ. Նշկեան

Պոլսոյ մէջ քերթիս վանաւման կեդրոնացեղին է՝  
**ՕՍՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ**  
Պապը Ալի ճաճէսի, Սեփեթիլի փողոց, Թիւ 27, եւ Ֆիննանըլար եօզուու,  
Պագրերըլար՝ Արմենակ Եազընեան եւ Ընկ. գրասունք, իսկ Բերայի մէջ, Մեծ-  
[Փողոց, Սբլանցիսի դէմ ծխավանառ Գ. Կիւլեբեանի խանութք:



# «ՏԱՃԱՐ»-ի

## ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                           |          |
|---------------------------|----------|
| Պոլսոյ համար տարեկան      | 35 դուրս |
| Գաւառաց » »               | 40 »     |
| Արտասահմանի համար տարեկան | 10 ֆրանկ |
| Ձեռքէ կը ծախուի պրակը     | 50 փարայ |

«Տաճար»-ի վերաբերեալ վարչական գործերու համար պէտք է դիմել  
ՂԵՒՈՂԻ Ծ. Վ. ԴՈՒՐՆԱՆ Ի

Իսկ խմբագրական գործերու համար պէտք է դիմել խմբագրապետ  
ԴԱՐՆԴԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐՆԱՆ Ի

ارمنيجه «داجار» غزتهسى ادارهخانهسى  
باب على جادهسى ابوالسعود زوقاغى نومرو ۲۷

Rédaction de la Revue «DADJAR».  
27, Rue Sépétjdjiler, Av. de la S. Porte, Constantinople. (Turquie).

Խմբագրութիւն «ՏԱՃԱՐ» Կրօնա-եկեղեցական կիսամսեայ հանդէսի  
Պապը Ալի ճատտէսի Սէփէթճիլէր փողոց թիւ 27

ԱՐՏՕՆԱՏԷՐ  
ՀՄԱՅԵԱՆԻ ԳԱՀԱՆԱՅ ԷԴՄԷՐՃԵԱՆ